

8

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ  
2020



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
 ՈՒՂԴՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|   |    |
|---|----|
| Հապավումներ .....   | 1  |
| Ներածություն .....  | 2  |
| ՀՀ կառավարության և «Իմ քայլը» դաշինքի ծրագրերով ստանձնված պարտավորությունները ..... | 3  |
| ՀՀ կառավարության ծրագիր .....   | 3  |
| «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր .....   | 4  |
| 1. Արդյունաբերության ոլորտի զարգացման ՀՀ կառավարության տեսլականը .....              | 5  |
| 2. Արդյունաբերության ոլորտի վիճակագրություն .....                                   | 11 |
| 3. Արդյունաբերության ոլորտի խոստումները և դրանց ընթացքը .....                       | 23 |
| 3.1. Հանքարդյունաբերություն .....   | 24 |
| 3.2. Վերամշակող արդյունաբերություն .....  | 29 |
| 3.2.1. Ծխախոտի արտադրություն .....  | 32 |
| 3.2.2. Սննդամթերքի արտադրություն .....  | 37 |
| 3.2.3. Խմիչքների արտադրություն .....  | 40 |
| Եզրակացություն .....  | 49 |

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

|        |  |
|--------|--|
| ԱՃԹՆ   | Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն  |
| ԱՄՆ    | Ամերիկայի Միացյալ Նահանգներ                            |
| ԱՏԳ ԱԱ | Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ |
| ԵԱՏՄ   | Եվրասիական տնտեսական միություն                         |
| ԵՄ     | Եվրոպական միություն                                    |
| ՀՀ     | Հայաստանի Հանրապետություն                              |
| ՀՀ ՎԿ  | ՀՀ վիճակագրական կոմիտե                                 |
| ՀՆԱ    | Համախառն ներքին արդյունք                               |
| ՓԲԸ    | Փակ բաժնետիրական ընկերություն                          |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն, որի գաղափարներն ամրագրվեցին նախ 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիների մեծամասնության աջակցությունը ստացած «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում, ապա ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» փաստաթղթում:

Կառավարության ծրագրի գաղափարական հիմքը վերոհիշյալ նախընտրական ծրագիրն է, որը սահմանում է ՀՀ կառավարության գործունեության հիմնարար ուղենիշներն առաջիկա հինգ տարիների համար: Մասնավորապես, համաձայն ՀՀ կառավարության ծրագրի (այսուհետ Ծրագիր), «Առաջիկա հինգ տարիներին՝ ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, **արդյունաբերական**, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն»: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ արդյունաբերության զարգացումը հանդիսանում է նոր կառավարության օրակարգային խնդիրը, և պետք է ակնկալել, որ իշխող քաղաքական ուժի կողմից արդեն իսկ իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ և քայլեր՝ Հայաստանն արդյունաբերական երկիր դարձնելու նպատակով:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության գործունեության ծրագրով ներկայացված խնդիրների հաղթահարման և 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիների մեծամասնության աջակցությունը ստացած «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակով տրված խոստումների կատարման ընթացքը, կատարված աշխատանքները և նախատեսվող միջոցառումները՝ դրանով իսկ ապահովելով հանրային վերահսկողություն այդ խոստումների իրականացման նկատմամբ:

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԻՄ ՔԱՅԼԸ» ԴԱՇԻՆՔԻ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՏԱՆՁՆՎԱԾ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՀՀ կառավարության ծրագիր

ՀՀ կառավարության ծրագիրը թեև անդրադառնում է երկրում արդյունաբերության զարգացմանը, սակայն առանձնապես աչքի չի ընկնում հստակ ու չափելի ցուցանիշներով: Հայաստանի արդյունաբերությանն առնչվող դրույթները ներկայացված են ՀՀ կառավարության ծրագրի 5-րդ (Բաժին 5. ՄՐՑՈՒՆԱԿ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ) և 6-րդ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ) բաժիններում:

Մասնավորապես, 5-րդ բաժնի 5.9-րդ մասում (ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ) ՀՀ կառավարությունը խոստանում է հետևյալը.

- **Անհրաժեշտ դեպքերում վերանայվելու են վերամշակող արդյունաբերության առանձին ճյուղերում սահմանված այն կարգավորումները**, որոնց պատճառով ձևավորվել են զարգացմանը խոչընդոտող անհաղթահարելի սահմանափակումներ:
- Միջոցներ են ձեռնարկվելու ԵԱՏՄ-ի շուկաներում վերամշակող արդյունաբերության առանձին ոլորտների նկատմամբ սահմանված ոչ տարիֆային կարգավորումների այնպիսի զարգացումների ուղղությամբ, որոնք էապես կպարզեցնեն մեր ձեռնարկությունների գործունեության պայմանները և կընդլայնեն այդ շուկաներում առաջխաղացման հնարավորությունները:

ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.3-րդ մասը վերաբերում է հանքարդյունաբերության ոլորտին: Մասնավորապես, ըստ ծրագրի.

- Կառավարության քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է **թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը**: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ **տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ**:
- ...հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության մշակումը հնարավորություն կտա ապահովելու ոլորտի կայուն զարգացում, որը կհավասարակշռի տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունությունը, ինչպես նաև կապահովի ոլորտի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը:
- Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու նպատակով Կառավարությունը նախատեսում է.

- մշակել **հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն** և դրանից բխող միջոցառումների ծրագիր.
- իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ ապահովելով հանքարդյունաբերությամբ զբաղվելու համար անհրաժեշտ ընթացակարգերի (լիցենզավորում, թույլտվություններ, հողօգտագործման հետ կապված կանոնակարգումներ և այլն) պարզեցում և համալիրություն, ազդակիր համայնքների բնակչության կարծիքի և բիզնեսի շահերի հավասարակշռում.
- բացահայտել ընդերքօգտագործող կազմակերպությունների իրական սեփականատերերին, ստեղծել ու վարել իրական սեփականատերերի ռեգիստրը:
- Կառավարությունը միջոցներ կձեռնարկի նաև Հայաստանում հանքարդյունաբերական հումքի վերամշակման հնարավորինս երկար արտադրական շղթայի հիմնադրման համար՝ այս ընթացքում խստորեն պահպանելով բարձր բնապահպանական չափանիշները»:

### «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Գրեթե միանման խոստումներ են ձևակերպված նաև «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում: Մասնավորապես, համաձայն նախընտրական ծրագրի.

- «հատուկ ուշադրության են արժանանալու բարձր տեխնոլոգիաների ոլորտը, վերամշակող եւ թեթեւ արդյունաբերությունը, բարձրարժեք գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը:»
- «Մենք իրականացնելու ենք շրջակա միջավայրի պաշտպանության հետեւյալ թիրախային ծրագրերը.
  - 7. մշակելու ենք հանքարդյունաբերության՝ օրենսդրական դաշտի, ոլորտում արձանագրված խնդիրների, միջազգային լավագույն ստանդարտների վերլուծության վրա հիմնված ռազմավարություն, որի արդյունքում դրվելու են ոլորտի զարգացման ռազմավարական հիմքերն ու սկզբունքները, ինչպես նաեւ մշակելու ենք վերջիններից բխող օրենսդրական բարեփոխումներ:
  - 10. մեր քաղաքականությունը միտված է լինելու ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը եւ վերամշակող հանքարդյունաբերության զարգացման խթանմանը, ինչը կապահովի հանքանյութերի մշակման ամբողջական ցիկլը եւ կստեղծի տնտեսական հավելյալ արժեք: Ուստի, նվազեցնելու ենք խտանյութի եւ չվերամշակված հումքի արտահանումը՝ այն փոխարինելով վերամշակված հանքանյութի արտահանմամբ:»

## 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀՀ կառավարության և «Իմ քայլը» դաշինքի ծրագրերում կարևորվում է Հայաստանը արդյունաբերական և տեխնոլոգիական երկիր դարձնելու անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է, որ կառավարության քայլերը և գործողությունները պետք է ուղղված լինեն այս նպատակին հասնելուն:

Դեռևս 2011 թվականին ՀՀ կառավարության թիվ 49 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ<sup>1</sup>, ՀՀ կառավարությունը հայտարարեց «նոր արդյունաբերական քաղաքականության» իրականացման մասին: Ըստ ռազմավարության՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունն արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված հավասարակշռված և փուլային միջոցառումների համախումբ է, որը նպատակադրում է արտահանման աճը և բազմազանեցումը: Արդյունաբերական քաղաքականության ուղղակի թիրախը վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումն էր: Այս ռազմավարության տեսլականը Հայաստանը բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր դարձնելն էր:

Ռազմավարությունը ուղղված էր վերամշակող արդյունաբերության հետևյալ ենթաճյուղերի զարգացմանը և արտահանման խթանմանը՝ համապատասխան պետական աջակցության միջոցով՝

- ադամանդագործություն,
- ոսկեգործություն,
- ժամացույցների արտադրություն,
- թեթև արդյունաբերություն,
- կոնյակագործություն և գինեգործություն,
- դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ,
- պահածոների արտադրություն,
- հանքային ջրերի և հյութերի արտադրություն,
- ճարտարագիտություն/ճշգրիտ ճարտարագիտություն,
- ոչ մետաղական հանքանյութերի վերամշակում:

Արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակով յուրաքանչյուր ոլորտի համար մշակվել էր ոլորտային ռազմավարություններ և դրանցից բխող գործողությունների ծրագրեր:

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77002>

2018 թվականին կայացած իշխանափոխությունից հետո, կառավարության նոր ծրագրով<sup>2</sup> առաջնային համարվեցին հետևյալ ոլորտները՝

- բարձր տեխնոլոգիաներ և ռազմարդյունաբերություն,
- վերամշակող արդյունաբերություն,
- զբոսաշրջություն:

Ռազմարդյունաբերությունը, վերամշակող արդյունաբերությունը և զբոսաշրջությունը, արևային էներգետիկայի զարգացման հետ մեկտեղ համարվեցին գործող կառավարության առաջնահերթությունը, ըստ 2019 թվականին հաստատված կառավարության ծրագրի<sup>3</sup>: Կառավարությունն իր ծրագրով առանձնահատուկ տեղ է հատկացրել նաև հանքարդյունաբերության ոլորտին՝ նպատակ ունենալով մշակել ոլորտի համապարփակ ռազմավարություն՝ ոլորտի կայուն զարգացումն ապահովելու նպատակով:

Իշխանափոխությունից հետո, ըստ էության, ՀՀ կառավարությունը չփոխեց արդյունաբերական քաղաքականության վեկտորը՝ որոշ չափով սակայն շեշտը տեղափոխելով բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերության ոլորտ:

2018 թվականին նորանշանակ կառավարությունը հայտարարեց նաև «տնտեսական հեղափոխության» մեկնարկի մասին, ինչը ենթադրում է, որ կառավարությունը պետք է շատ արագ վերաձևակերպեր առկա գործիքակազմը և մշակեր արդյունաբերության զարգացմանն ուղղված նոր ռազմավարություն և գործողությունների ծրագիր:

Իշխանափոխությունից հետո անցել է երկու տարի, սակայն ուսումնասիրությունը չի բացահայտել արդյունաբերության զարգացմանն ուղղված որևէ նոր ռազմավարական փաստաթղթի առկայություն: Ավելին, ՀՀ կառավարությունը շարունակում է մինչ օրս առաջնորդվել 2011 թվականին ընդունված ռազմավարությամբ, գործողությունների ծրագրերով և աջակցության գործիքակազմով: Այս երկու տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը ոչ մի քայլ չի ձեռնարկել 2011 թվականին ընդունված **ռազմավարությունը վերանայելու կամ աջակցության ուղղություններն ու գործիքակազմը փոփոխելու ուղղությամբ**:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում պետական աջակցությունը տրամադրվում է հետևյալ ուղղություններով՝

- գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում.
- արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում.
- նպատակային շուկաներում հայկական ապրանքների առաջնորդում, այդ թվում՝

<sup>2</sup> ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշում, <https://www.gov.am/files/docs/2782.pdf>

<sup>3</sup> ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>



- օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման միջոցառումների կազմակերպում և իրականացում,
- ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում,
- գործարար կապերի հաստատում.
- ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում.
- արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում:

2018-2019 թվականների պետական աջակցության ծրագրերին մանրամասն անդրադարձ է կատարվել «Արտահանման խթանմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրություն (2018-2019թթ. ժամանակահատված) փաստաթղթում<sup>4</sup>: Միայն հարկ ենք համարում նշել, որ 2019 թվականին նախատեսված 1 մլրդ 72 մլն դրամից հատկացվել է մոտ 851 մլն ՀՀ դրամ գումար<sup>5</sup>, իսկ 2020 թվականին նախատեսված է հատկացնել 528 մլն ՀՀ դրամ<sup>6</sup>:

2019 թվականի հոկտեմբերին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հանրային քննարկման ներկայացվեց «Արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարությունը» հաստատելու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը<sup>7</sup>: Փաստաթղթով արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարության անհրաժեշտությունը հիմնավորվում էր Հայաստանի առանձնահատկություններով (փոքր շուկա, արտահանման հետ կապված լոգիստիկ բարդություններ), ինչպես նաև համաշխարհային շուկայում ընթացող զարգացումներով:

2020 թվականի հունվարին հանրային քննարկմանը ներկայացվեց «Արդյունաբերության քաղաքականության ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը<sup>8</sup>, որը, ըստ էության, արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարության նախագծի վերանայված տարբերակն էր: Այս փաստաթուղթը մշակվել էր Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ուղղված է ոչ միայն արտահանման խրախուսմանը, այլև

<sup>4</sup> <https://www.luys.am/img/artpic/small/e12612ab5bee4728f7d6%D4%B1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AD%D5%A9%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%B2%D5%B2%D5%BE%D5%A1%D5%AE%D5%80%D5%80%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

<sup>5</sup> ՀՀ 2019թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն:

<sup>6</sup> <https://mineconomy.am/media/10862/hraman%20278.pdf>

<sup>7</sup> <https://www.e-draft.am/projects/2006>

<sup>8</sup> <https://www.e-draft.am/projects/2237>

արտադրողականության բարձրացմանը, լոգիստիկայի և ենթակառուցվածքների զարգացմանը, կապիտալի հասանելիությանը և ֆինանսական ռիսկերի նվազեցմանը:

Ռազմավարությունը չի դասակարգում արդյունաբերության ճյուղերն ըստ առաջնայնությունների և հիմնական նպատակ է սահմանում արդյունաբերության մրցունակության շարունակական աճը՝ արդյունաբերության արտադրողականության աճի (տարեկան միջինը 5,7%), արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալի շարունակական աճի (տարեկան միջինը 15%), արդյունաբերությունում զբաղվածների շարունակական աճի (տարեկան միջինը 6%) և արդյունաբերական արտադրանքի ծավալում արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալի տեսակարար կշռի ավելացման (մինչև 60%) շնորհիվ:

Ռազմավարությունը ներկայացնում է նաև դրա իրականացման չափելի ցուցանիշները, որոնք են.

|   | 2018թ. | 2025թ. |
|---|--------|--------|
| Արդյունաբերական արտադրանք, մլրդ ՀՀ դրամ                             | 1733   | 3900   |
| Արդյունաբերական արտադրանքի արտահանում, մլրդ ՀՀ դրամ                 | 787,7  | 2300   |
| Արդյունաբերությունում զբաղվածների քանակը, մարդ                      | 89190  | 137500 |
| Արդյունաբերության արտադրողականություն տարեկան, մլն դրամ/մարդ        | 19,5   | 28,0   |
| Մշակող արդյունաբերական արտադրանք, մլրդ ՀՀ դրամ                      | 1143   | 3100   |
| Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանում, մլրդ ՀՀ դրամ          | 488,4  | 2000   |
| Մշակող արդյունաբերությունում զբաղվածների քանակը, մարդ               | 57301  | 101000 |
| Մշակող արդյունաբերության արտադրողականություն, տարեկան մլն դրամ/մարդ | 20,1   | 31,0   |

Ռազմավարությանը կից ներկայացված է նաև ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը 2020-2025 թվականների համար: Չանդրադառնալով այս ռազմավարության ուշացած լինելու և դեռևս ընդունված չլինելու հանգամանքին (քանի որ այն պետք է մշակվեր առնվազն 2019 թվականին՝ ՀՀ կառավարության ծրագրի հրապարակումից քիչ անց, սակայն մինչ օրս դեռ չի էլ ընդունվել)՝ կցանկանայինք առանձնացնել ռազմավարության և միջոցառումների ծրագրի մի քանի հիմնարար թերություն:

1. **Ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացման մոնիթորինգի բացակայություն.** Թե որքանով ռազմավարությունը և ձեռնարկված միջոցառումները կհասնեն իրենց նպատակին, անչափ կարևոր է մոնիթորինգի հստակ մեխանիզմի առկայությունը և պարբերական իրականացումը: Մոնիթորինգը հնարավորություն կտա վեր հանել ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքում բացահայտված

թերություններն ու խնդիրները, ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ կամ իրականացնել շտկումներ, ինչը կապահովի նախանշված թիրախներին և նպատակների հասանելիությունը: Ռազմավարությունում, սակայն, չի ներկայացվում, թե ինչպես է նախատեսվում դրա մոնիթորինգի իրականացումը:

2. **Ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացման ռիսկերի գնահատման բացակայություն.** Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ ցանկացած ծրագիր կամ ռազմավարություն կարող է հաջողություն գրանցել, եթե կարողանում է նախօրոք բացահայտել ռիսկի այն գործոնները, որոնք ազդեցություն կունենան դրա իրականացման վրա և մշակում է ռիսկերի մեղմման միջոցառումներ: Համաշխարհային ճգնաժամերի ու համավարակների փորձը մեկ անգամ վկայում է ռիսկերի գնահատման մեխանիզմների առկայության անհրաժեշտությունը, ինչը, սակայն, կարծես հաշվի չեն առել ռազմավարությունը մշակողները:
3. **Ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացման հաշվետվողականության բացակայություն.** Թեև ՀՀ կառավարությունը մշտապես բարձրաձայնում է հաշվետվողականության և թափանցիկ աշխատելու իր գործելակերպի մասին, ռազմավարության այս նախագծում ընդհանրապես խոսք չի գնում դրա մասին: Ռազմավարության իրականացման ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվում են տրամադրել ՀՀ պետական բյուջեից և հասարակությունը պարտավոր է տեղեկացված լինել, թե ինչպես են օգտագործվում իր կողմից վճարված հարկային միջոցները և ինչ արդյունքներ են դրանք ապահովում:
4. **Միջոցառումների հստակ և չափելի ցուցանիշների բացակայություն.** Յուրաքանչյուր ծրագրի և միջոցառման հաջողության գնահատման ցուցանիշը հստակ չափորոշիչներն են: Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության միջոցառումների ծրագիրը թեև ներկայացնում է յուրաքանչյուր միջոցառման ակնկալվող արդյունքը, դրանք երբեմն չափելի չեն («Իրականացված միջոցառումներ», «Գույքագրման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն») և հնարավորություն չեն տալիս գնահատելու, թե որքանով են արդյունավետ և նպատակային նախատեսված միջոցառումները:

Ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը դեռևս հաստատված չէ ՀՀ կառավարության կողմից: Նկատի ունենալով COVID-19-ով պայմանավորված նոր իրավիճակն աշխարհում և Հայաստանում՝ կարծում ենք, որ այս ռազմավարությունը ենթակա է վերանայման՝ համավարակի տված դասերը քաղելու և նոր իրականությանը համապատասխանեցնելու առումով: Հաշվի առնելով նաև ներկա կառավարության կողմից ռազմավարական փաստաթղթերի մշակման և ընդունման արագությունը՝ կարելի է վստահորեն ասել, որ այս փաստաթուղթը կընդունվի լավագույն դեպքում 2020

թվականի ավարտին՝ ևս մեկ տարով հետաձգելով արդյունաբերության ոլորտում պետական քաղաքականության հիմնական մոտեցումների սահմանումը:


Այսպիսով, կարելի է փաստել, որ այսօր Հայաստանը չունի արդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն և առաջնորդվում է դեռևս 2011 թվականին՝ նախորդ իշխանության օրոք ընդունված ռազմավարությամբ: Հետևաբար, մինչ օրս չի իրականացվել արդյունաբերության ոլորտի խոստացված «հեղափոխությունը»:

## 2. ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության ոլորտի վիճակագրության ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալ վերջին տարիներին ոլորտի զարգացման միտումները, որքանով է կառավարության քաղաքականությունը նպաստում վերամշակող արդյունաբերության զարգացմանը, որոնք են արդյունաբերության այն ճյուղերը, որոնք զարգանում են և ունեն անելու հնարավորություններ: Այս հատվածի ուսումնասիրության համար հիմք է ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ կառույցների կողմից հրատարակված տվյալները:

Արդյունաբերությունը դեռևս խորհրդային տարիներից համարվում էր Հայաստանի առանցքային ճյուղերից մեկը: Այսօր էլ այն իր կարևոր դերակատարումն ունի երկրի տնտեսության զարգացման գործում և կազմում է ՀՆԱ-ի 18,1%-ը՝ 2019 թվականի տվյալներով: Ի դեպ, հարկ է նշել, որ այս ցուցանիշը չի փոխվել 2018 թվականի համեմատ, թեև արդյունաբերության ոլորտի զարգացումը համարվեց ՀՀ կառավարության գերակայություններից մեկը:

Գծապատկեր 1. Արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարություն


Ինչպես ներկայացված է Գծապատկեր 1-ում, 2018 և 2019 թվականներին արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 2017 թվականի համեմատ: Ճիշտ է, 2020 թվականի առաջին եռամսյակում նկատվում է այդ մասնաբաժնի աճ մինչև 20%, սակայն սա բացառիկ երևույթ չէ, քանի որ այն կրում է սեզոնային բնույթ, և նման ցուցանիշները տնտեսությունը հասել է ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականներին (համապատասխանաբար 22.1% և 20.3%):

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների, արդյունաբերության ոլորտը ներառում է չորս հիմնական ճյուղեր՝

- հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, այդ թվում՝
  - մետաղական հանքաքարի արդյունահանում,
  - հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր,
  - հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն,
- մշակող (կամ վերամշակող) արդյունաբերություն, այդ թվում՝
  - սննդամթերքի արտադրություն,
  - խմիչքների արտադրություն,
  - ծխախոտային արտադրատեսակների արտադրություն,
  - մանածագործական արտադրատեսակների արտադրություն,
  - հագուստի արտադրություն,
  - պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում,
  - քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն,
  - դեղագործական արտադրանքի արտադրություն,
  - ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն,
  - այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն,
  - հիմնային մետաղների արտադրություն,
  - պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն,
  - համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն,
  - էլեկտրական սարքավորանքի արտադրություն,
  - մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշի խմբավորումներում,
  - կահույքի արտադրություն,
  - ոսկերչական արտադրատեսակների արտադրություն,
- էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, այդ թվում՝
  - էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում,
  - գազակերպ վառելիքի բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով,
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում, այդ թվում՝
  - ջրի հավաքում, մշակում և բաշխում,
  - կոյուղի,
  - թափոնների հավաքում, մշակում, ոչնչացում, վնասագերծում և նյութերի վերականգնում:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում գերակշիռ դիրք է գրավում վերամշակող արդյունաբերությունը: Պատմականորեն այն հանդիսացել է արդյունաբերության հիմնական ճյուղը, որին բաժին է հասել արդյունաբերական արտադրանքի 69.8%-ը 2019 թվականին: Արդյունաբերության հաջորդ խոշոր ճյուղը հանդիսանում է հանքարդյունաբերությունը (հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում)՝ 16.9% տեսակարար կշռով:

Գծապատկեր 2. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն՝ ըստ արտադրության բաժինների



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2019 թվականին կազմել է 2,091.4մլրդ ՀՀ դրամ՝ 8%-ով ավելի, քան 2018 թվականին: 2018 թվականի համեմատ 2019 թվականին 24.6%-ով աճել է հանքարդյունաբերության ծավալները, և 7,3%-ով՝ մշակող արդյունաբերության ծավալները: Միաժամանակ անկում է գրանցվել էլեկտրաէներգիայի արտադրության և ջրամատակարարման ճյուղերում<sup>9</sup>:

2017 թվականի համեմատ արդյունաբերության ոլորտը 2019 թվականին աճել է շուրջ 14%-ով: Այդ ժամանակահատվածում աճել են ինչպես հանքարդյունաբերության ծավալները (մոտ 5%), այնպես էլ մշակող արդյունաբերության ծավալները (շուրջ 21%):

<sup>9</sup> [https://www.armstat.am/file/article/2nish\\_2019\\_t.pdf](https://www.armstat.am/file/article/2nish_2019_t.pdf)

Սակայն նույն ժամանակահատվածում նվազել են էլեկտրաէներգիայի արտադրության և ջրամատակարարման ծավալները:

**Աղյուսակ 1. Արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, 2017-2019թթ., 2020թ. առաջին կիսամյակ, մլրդ ՀՀ դրամ**

|   | 2017թ.  | 2018թ.  | 2019թ.  | 2020թ. 1-ին կիս. |
|---|---------|---------|---------|------------------|
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը   | 1,834.8 | 1,937.5 | 2,091.4 | 896.0            |
| այդ թվում՝  |         |         |         |                  |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում                | 341.0   | 300.7   | 356.8   | 181.5            |
| Մշակող արդյունաբերություն   | 1,210.0 | 1,352.1 | 1,455.7 | 578.3            |
| որից՝   |         |         |         |                  |
| սննդամթերքի արտադրություն   | 466.1   | 524.8   | 547.7   | 196.7            |
| հիմնային մեքանիզմների արտադրություն                                       | 174.9   | 173.7   | 167.8   | 93.6             |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն                                 | 157.7   | 178.4   | 196.4   | 70.1             |
| խմիչքների արտադրություն   | 149.5   | 152.9   | 185.4   | 93.2             |
| մանածագործական արտադրատեսակների արտադրություն                             | 0.6     | 1.0     | 1.4     | 0.4              |
| հագուստի արտադրություն  | 16.9    | 22.5    | 27.7    | 13.1             |
| ղեղագործական արտադրանքի արտադրություն                                     | 9.6     | 9.6     | 9.8     | 5.2              |
| էլեկտրական սարքավորանքի արտադրություն                                     | 18.3    | 14.9    | 18.1    | 6.4              |
| համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն       | 7.8     | 9.9     | 10.9    | 3.9              |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում | 3.9     | 5.8     | 5.2     | 1.5              |
| Էլեկտրաէներգիայի, գազի, զոլորշու և լավորակ օդի մատակարարում               | 258.8   | 259.0   | 254.0   | 126.0            |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում              | 25.3    | 25.7    | 24.9    | 10.1             |

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


2020 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշները, սակայն, էականորեն տարբերվում են 2018 և 2019 թվականների առաջին կիսամյակների ցուցանիշներից (տե՛ս Աղյուսակ 2): Այսպես, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի<sup>10</sup>, 2020 թվականի առաջին կիսամյակում, 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ **24.3%-ով աճել է հանքագործական արդյունաբերությունը և բաց հանքերի շահագործումը:** Ընդ որում

<sup>10</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_06\\_20a\\_121.pdf](https://www.armstat.am/file/article/sv_06_20a_121.pdf)



դա տեղի ունեցել հիմնականում մետաղական հանքաքարի արդյունահանման (աճը՝ 24.9%) և հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերի հաշվին (աճը՝ 8.7%):

Գծապատկեր 3. Արդյունաբերության արտադրանքի ծավալը 2017-2019թթ., ըստ ճյուղերի



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքը նվազել է 3.6%-ով: Իսկ անկումն այս ոլորտում մեծապես պայմանավորված է տեխնոլոգիական արդյունաբերության անկմամբ՝ համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն (անկումը՝ 28%), մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում (անկումը՝ 30.8%), էլեկտրական սարքավորանքի արտադրություն (անկումը՝ 13.7%): Շատերը կարող են պայմանավորել անկման նման բարձր ցուցանիշը COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներով, սակայն անկում արձանագրվել էր դեռևս 2020 թվականի առաջին եռամսյակում. համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն (անկումը՝ 25.3%), մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում (անկումը՝ 28.3%), էլեկտրական սարքավորանքի արտադրություն (անկումը՝ 7.1%): Այսինքն՝ ՀՀ կառավարության խոստումը բարձր տեխնոլոգիական արդյունաբերության անցնելու առումով կարծես դեռևս իրականություն չի դառնում:

**Աղյուսակ 2. Արդյունաբերության արտադրանքի ծավալը 2017-2020թթ. առաջին կիսամյակում, մլրդ. ՀՀ դրամ (համադրելի գներով)**

|   | 2017թ. 1-ին կիս. | 2018թ. 1-ին կիս. | 2019թ. 1-ին կիս. | 2020թ. 1-ին կիս. |
|---|------------------|------------------|------------------|------------------|
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը   | 760.4            | 844.7            | 903.2            | 914.1            |
| այդ թվում՝  |                  |                  |                  |                  |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում                | 155.7            | 158.9            | 169.7            | 197.9            |
| այդ թվում՝  |                  |                  |                  |                  |
| մետաղական հանքաքարի արդյունահանում  | 152.8            | 153.8            | 164.8            | 192.8            |
| հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր     | 2.9              | 4.2              | 4.5              | 4.9              |
| հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն                   | -                | 0.9              | 0.4              | 0.2              |
| Մշակող արդյունաբերություն   | 462.9            | 546.7            | 594.5            | 579.6            |
| որից՝   |                  |                  |                  |                  |
| սննդամթերքի արտադրություն   | 145.5            | 183.1            | 197.3            | 201.1            |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն                                 | 70.7             | 75.8             | 88.5             | 70.8             |
| խմիչքների արտադրություն   | 61.6             | 65.6             | 70.8             | 68.4             |
| մանածագործական արտադրատեսակների արտադրություն                             | 0.3              | 0.4              | 0.5              | 0.4              |
| հագուստի արտադրություն  | 5.6              | 9.7              | 12.2             | 11.9             |
| դեղագործական արտադրանքի արտադրություն                                     | 4.6              | 4.7              | 4.7              | 5.3              |
| էլեկտրական սարքավորանքի արտադրություն                                     | 5.0              | 5.2              | 7.2              | 6.3              |
| համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն       | 2.6              | 4.6              | 4.6              | 3.5              |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում | 0.9              | 1.7              | 2.3              | 1.6              |
| էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում               | 129.7            | 126.7            | 126.3            | 126.5            |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում              | 12.1             | 12.4             | 12.7             | 10.1             |

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ինչպես արդեն նշվեց, մշակող արդյունաբերությունը համարվում է Հայաստանի արդյունաբերության հիմնական ուղղությունը՝ 2019 թվականին կազմելով ընդհանուր արդյունաբերության 69.8%-ը: Մշակող արդյունաբերության հիմնական ոլորտների վիճակագրական տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Մշակող արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրության ծավալն ընթացիկ գներով, 2017-2019թթ., 2020թ. հունվար-հունիս, մլն դրամ**

|   | 2017                    | 2018                    | 2019                    | 2020<br>հունվար-<br>հունիս | 2019թ.<br>հունվար-<br>հունիսի<br>համեմատ, % |
|---|-------------------------|-------------------------|-------------------------|----------------------------|---|
| <b>ՄՇԱԿՈՂ<br/>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b>  | <b>1,209,503.<br/>4</b> | <b>1,352,067.<br/>1</b> | <b>1,455,716.<br/>4</b> | <b>578,318.<br/>5</b>      | <b>96.4</b>                                 |
| <i>որից՝</i>  |                         |                         |                         |                            |   |
| Մննդամթերքի արտադրություն   | 466,051.4               | 524,804.4               | 547,645.7               | 196,711.1                  | 100.0                                       |
| Խմիչքների արտադրություն   | 149,514.0               | 152,917.1               | 185,386.9               | 69,732.9                   | 93.2  |
| Ծխախոտային<br>արտադրատեսակների<br>արտադրություն   | 157,747.2               | 178,367.7               | 196,370.3               | 70,087.9                   | 77.4  |
| Մանածագործական<br>արտադրատեսակների<br>արտադրություն                                       | 620.4                   | 975.6                   | 1,413.5                 | 392.2                      | 67.8  |
| Հագուստի արտադրություն  | 16,848.9                | 22,529.5                | 27,723.4                | 13,054.4                   | 94.9  |
| Պոլիգրաֆիական գործունեություն,<br>գրառված կրիչների բազմացում                              | 15,344.2                | 19,133.3                | 22,774.9                | 10,087.5                   | 78.5  |
| Քիմիական նյութերի և քիմիական<br>արտադրատեսակների<br>արտադրություն                         | 11,561.4                | 16,625.6                | 18,828.6                | 9,913.4                    | 119.1                                       |
| Դեղագործական արտադրանքի<br>արտադրություն  | 9,602.4                 | 9,548.2                 | 9,821.6                 | 5,207.9                    | 116.2                                       |
| Ռետինե և պլաստմասսայե<br>արտադրատեսակների<br>արտադրություն                                | 31,650.9                | 35,868.3                | 38,082.1                | 14,406.0                   | 85.6  |
| Այլ ոչ մետաղական հանքային<br>արտադրատեսակների<br>արտադրություն                            | 44,505.2                | 61,545.6                | 68,943.9                | 28,084.9                   | 97.2  |
| Հիմնային մետաղների<br>արտադրություն   | 174,941.2               | 173,736.8               | 167,825.9               | 93,584.2                   | 105.2                                       |
| Պատրաստի մետաղե<br>արտադրատեսակների<br>արտադրություն, բացի<br>մեքենաներից և սարքավորանքից | 12,389.1                | 14,219.8                | 18,370.0                | 8,523.9                    | 153.9                                       |
| Համակարգիչների, էլեկտրոնային և<br>օպտիկական սարքավորանքի<br>արտադրություն                 | 7,828.5                 | 9,871.9                 | 10,888.1                | 3,871.1                    | 72.0  |
| Էլեկտրական սարքավորանքի<br>արտադրություն  | 18,328.4                | 14,899.7                | 18,138.4                | 6,369.4                    | 86.3  |
| Մեքենաների և սարքավորանքի<br>արտադրություն, չներառված ուրիշ<br>խմբավորումներում           | 3,891.1                 | 5,828.0                 | 5,224.6                 | 1,534.4                    | 69.2  |
| Կահույքի արտադրություն  | 3,650.7                 | 5,261.8                 | 7,265.1                 | 3,279.6                    | 133.2                                       |

|   | 2017     | 2018     | 2019     | 2020<br>հունվար-<br>հունիս | 2019թ.<br>հունվար-<br>հունիսի<br>համեմատ, % |
|---|----------|----------|----------|----------------------------|---|
| Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | 49,628.5 | 51,543.8 | 47,039.0 | 23,548.9                   | 133.4                                       |

*Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե*

2018 թվականի համեմատ 2019 թվականին մշակող արդյունաբերությունից աճ են արձանագրել սննդամթերքի, ծխախոտի և խմիչքների արտադրությունը: Կայուն աճ են ապահովել նաև արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում գերակա ճանաչված մի շարք ոլորտներ: 2017 թվականի համեմատ 2019 թվականին նվազել է էլեկտրական սարքավորանքի արտադրությունը, ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը, հիմնային մետաղների արտադրությունը: Եվ դա զարմանալի չէ, քանի որ կառավարությունը այս երկու տարվա ընթացքում ոչ մի քայլ չի ձեռնարկել այս ոլորտների զարգացումը խթանելու նպատակով: Նույնիսկ այս ընթացքում գոյություն չունեին այն կառույցները, որոնք կնպաստեին արտահանման խթանմանը, և նշված ոլորտների արտահանման խրախուսման գործառույթը ըստ էության ՀՀ կառավարությունը չի իրականացրել:

2020 թվականի առաջին կիսամյակում, 2019 նույն ժամանակահատվածի համեմատ, բարձր տեխնոլոգիական արտադրության ծավալների անկումից բացի, անկում է արձանագրվել նաև արտահանման մյուս հիմնական ճյուղերում՝ խմիչքների, ծխախոտի և մանածագործական ապրանքների արտադրություն: Արտահանման տեսանկյունից կարևոր ճյուղերից զգալի աճ է արձանագրել դեղագործական արտադրանքի արտադրությունը, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի պատճառով երկրում դեղամիջոցների նկատմամբ պահանջարկի աճով:

**Աղյուսակ 4. Մշակող արդյունաբերության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը 2017-2019 թվականներին, %**

|   | 2017  | 2018  | 2019  |
|---|-------|-------|-------|
| Սննդամթերքի արտադրություն                                   | 28.5% | 28.3% | 37.2% |
| Խմիչքների արտադրություն                                     | 14.4% | 13.2% | 12.6% |
| Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն                   | 15.2% | 15.5% | 13.4% |
| Հագուստի արտադրություն                                      | 1.6%  | 2.0%  | 1.9%  |
| Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում   | 1.5%  | 1.7%  | 1.5%  |
| Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն | 1.1%  | 1.4%  | 1.3%  |
| Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն    | 4.3%  | 5.3%  | 5.8%  |

|  |       |       |       |
|--|-------|-------|-------|
| Հիմնային մետաղների արտադրություն               | 16.8% | 15.1% | 11.4% |
| Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն | 1.2%  | 1.2%  | 1.2%  |
| Էլեկտրական սարքավորանքի արտադրություն          | 1.8%  | 1.3%  | 1.2%  |
| Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն      | 4.8%  | 4.5%  | 3.2%  |
| Գործունեության այլ տեսակներ                    | 8.8%  | 10.5% | 9.3%  |

*Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե*

2019 թվականին զգալիորեն աճել է սննդամթերքի արտադրության տեսակարար կշիռը՝ հիմնականում մյուս ճյուղերի տեսակարար կշիռների անկման ֆոնին:

Արդյունաբերության մյուս ճյուղերում (էլեկտրաէներգիայի արտադրություն և ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում) 2017 թվականի համեմատ 2019 թվականին ևս արձանագրվել է անկում: Այսպես, 2019 թվականին արտադրվել և բաշխվել է մոտ 200 մլն դրամով պակաս էլեկտրաէներգիա, քան 2017 թվականին: Նույն ժամանակահատվածում նվազել է նաև ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում ճյուղի արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ շուրջ 2%-ով: Դա հիմնականում պայմանավորված է թափոնների հավաքման և մշակման գծով ավելի քան 40% անկմամբ:

|   | 2017թ.<br>(մլն դր.) | 2018թ.<br>(մլն դր.) | 2019թ.<br>(մլն.դր.) | 2020թ.<br>1-ին կիս.<br>(մլն դր.) |
|---|---------------------|---------------------|---------------------|----------------------------------|
| <b>Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում</b>                  | 258,825.0           | 258,987.3           | 253,977.8           | 126,024.1                        |
| <i>էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում</i>                          | 214,732.1           | 212,876.4           | 214,560.4           | 105,188.5                        |
| <i>գազակերպ վառելիքի բաշխում<br/>գազամատակարարման համակարգի միջոցով</i>             | 44,092.9            | 46,110.9            | 39,417.4            | 20,835.6                         |
| <b>Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում</b>                 | 25,346.0            | 25,676.0            | 24,910.7            | 10,081.6                         |
| <i>ջրի հավաքում, մշակում և բաշխում</i>  | 14,883.6            | 15,953.9            | 17,634.9            | 7,998.0                          |
| <i>կոյուղի</i>  | 2,427.2             | 2,533.0             | 2,552.5             | 1,137.1                          |
| <i>թափոնների հավաքում, մշակում, ոչնչացում, վնասագերծում և նյութերի վերականգնում</i> | 8,035.2             | 7,189.1             | 4,723.4             | 946.5                            |

Ի դեպ, հարկ է նշել, որ ջրօգտագործման ծավալները 2016-2018 թվականների ընթացքում նվազել են՝ 2 496.0 մլն մ<sup>3</sup>-ից հասնելով 1926.5 մլն մ<sup>3</sup>-ի: Ընդ որում, եթե խմելու ջրի օգտագործման ծավալները 2017 թվականի համեմատ աճել են շուրջ 80 մլն խորանարդ մետրով, նույն ժամանակահատվածում նույն ծավալով նվազել է ջրօգտագործումը արտադրության, կոմունալ և շինարարության ոլորտներում և ևս 100 մլն մ<sup>3</sup> գյուղատնտեսության և ձկնաբուծության ոլորտներում: Այս ամենին զուգահեռ, 2017 թվականի համեմատ 2018 թվականին աճել է ստորգետնյա ջրաղբյուրներից ջրառի ծավալները: Իհարկե, աճը մեծ ծավալներ չի կազմում՝ մոտ 40 մլն մ<sup>3</sup> և այնուամենայնիվ վկայում է ջրային պաշարների պահպանմանն ուղղված ջանքերի անարդյունավետության մասին:

Էներգետիկայի ոլորտում 2019 թվականին արձանագրված անկումը 2017 թվականի համեմատ հիմնականում պայմանավորված է ատոմային էներգիայի արտադրության ծավալների անկմամբ՝ մոտ 16%-ով:


**Աղյուսակ 5. Էլեկտրաէներգիայի արտադրությունը 2017-2019 թվականներին, մլն կՎտ/ժ**

|                          | 2017    | 2018    | 2019    |
|--------------------------|---------|---------|---------|
| Բոլոր էլեկտրակայանները   | 7 762.9 | 7 776.9 | 7 632.3 |
| այդ թվում՝               |         |         |         |
| Ջերմային                 | 2 871.8 | 3 375.6 | 3 046.9 |
| Հիդրոէլեկտրակայաններ     | 2 269.0 | 2 318.2 | 2 370.9 |
| Ատոմային                 | 2 619.6 | 2 076.1 | 2 197.8 |
| Հողմային էլեկտրակայաններ | 2.1     | 1.9     | 3.3     |
| Արևային էլեկտրակայաններ  | 0.4     | 5.1     | 13.4    |

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, 2020թ.

2019 թվականին էլեկտրաէներգիայի 40%-ն արտադրվել է ջերմային կայանների կողմից, 31%-ը՝ հիդրոէլեկտրակայանների, իսկ 29%-ը ատոմային կայանի կողմից: Արևային էլեկտրակայանները արտադրել են էլեկտրաէներգիայի ընդամենը 0.18%-ը (տես Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ էլեկտրակայանների, 2019թ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, 2020թ.

Թեև 2017 թվականի համեմատ 2019 թվականին զգալիորեն աճել է այլ աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը հիմնականում պայմանավորված է արևային էներգիայի մասսայական տարածմամբ, կարծում ենք՝ այն բավարար չէ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված մինչև 2022 թվականը ներքին սպառման կառուցվածքում արևային կայանների կշիռը առնվազն 10 տոկոսին հասցնելու խոստման իրականացման համար: ՀՀ կառավարությունը պետք է զգալի ջանքեր գործադրի այդ նպատակին հասնելու համար: Սակայն, նկատի ունենալով գործարար միջավայրի բարելավման և ներդրումների ներգրավման ուղղությամբ ՀՀ ներկայիս կառավարության կողմից իրականացվող քայլերը, ինչպես նաև արևային էլեկտրակայանների արտադրության ներկայիս ծավալները (ընդամենը 0.18%)՝ այս ցուցանիշի հասանելիությունը մեր կարծիքով անիրական է:

Ամփոփելով վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտը դեռևս չունի աճի միտում, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության ծրագրային մոտեցումներին և նպատակներին: 2020 թվականի առաջին կիսամյակում նկատվում է նաև հանքարդյունաբերության ծավալների աճ, հիմնականում արդյունահանման ոլորտում, ինչը չի նպաստում մշակող արդյունաբերության զարգացմանը և նոր ու բարձր տեխնոլոգիաների ներդրմանն այդ ոլորտում: Հանքարդյունաբերությունը դեռևս շարունակում է դիտարկվել որպես արդյունաբերության կարևոր ոլորտ:

Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում թեև զգալիորեն աճել է արևային կայաններից էներգիայի արտադրության ծավալները, կառավարության կողմից դրված ներքին սպառման կառուցվածքում առնվազն 10%-ի ցուցանիշը իրատեսական չէ:

Սույն զեկույցի հաջորդ հատվածներում առավել մանրամասն անդրադարձ կկատարվի հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության ոլորտներում ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերին և հիմնական միջոցառումներին:



### 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԹԱՅՔԸ

Ուսումնասիրության սույն հատվածում անդրադարձ կկատարենք արդյունաբերության ոլորտում ՀՀ կառավարության կողմից տրված խոստումներին և դրանց իրականացման ընթացքին: Այս հատվածում հատուկ անդրադարձ կկատարվի հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության ոլորտներում տրված խոստումներին՝ որոնք ՀՀ կառավարության ծրագրում ներկայացվել են առանձին բաժինների տեսքով: Անդրադարձ չենք կատարի էներգետիկայի և ջրամատակարարման ոլորտներում ՀՀ կառավարության կողմից տրված խոստումներին և կատարված աշխատանքներին, քանի որ դրանք հանդիսանում են առանձին ուսումնասիրության առարկա:

Այնուամենայնիվ, կցանկանայինք հակիրճ անդրադառնալ էներգետիկ բնագավառում ՀՀ կառավարության խոստումներին, որոնք էականորեն չեն տարբերվում 2017-2022 թվականների ՀՀ կառավարության ծրագրային դրույթներից<sup>11</sup>: Մասնավորապես, երկու ծրագրերում էլ կարևորվում է երկրի էներգետիկ անկախության ապահովումը և անվտանգության բարձրացումը՝ դրանք համարելով էներգետիկ բնագավառում կառավարության քաղաքականությունը: Երկու ծրագրերում էլ ներքին շուկայի կարիքներից ելնելով՝ «Վրաստանի ու Իրանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելու նպատակով» կառավարությունը ձեռնամուխ է լինելու՝

- էներգետիկ շուկայի փուլային ազատականացման գործընթացին,
- տարածաշրջանում իրացման նոր էներգետիկ շուկաներ փնտրելու, ներկրման և արտահանման ակտիվ քաղաքականության միջոցով Հայաստանի էներգետիկ անկախության ապահովմանը,
- նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման համար օրենսդրական խթաններ ձևավորելուն,
- Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգմանը և արդիականացմանը,
- Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման ծրագրերի իրականացմանը:

Վերականգնվող էներգիայի աղբյուրների (արևային և հողմային կայաններ) օգտագործումը նույնպես ներկայացված է երկու ծրագրերով՝ որպես էներգետիկ բնագավառում կառավարության առաջնահերթություն:

Այսպիսով ակնհայտ է, որ նոր կառավարությունն այս բնագավառում հիմնականում հանդես չի եկել նոր, «հեղափոխական» գաղափարներով և նորարարություններով: Սակայն հետագա ուսումնասիրության առարկա կարող է հանդիսանալ էներգետիկ կառավարման նոր համակարգի ներդրման ուղղությամբ կառավարության

<sup>11</sup> <https://www.gov.am/files/docs/2207.pdf> և <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

իրականացրած աշխատանքները, էներգետիկայի ոլորտում նոր ռազմավարական ծրագրերը և դրանց իրականացման ընթացքը:

### 3.1. Հանքարդյունաբերություն

#### «Կառավարության ծրագիր»

- Կառավարության քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է **թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը**: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ **տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ**:
- ...հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության մշակումը հնարավորություն կտա ապահովելու ոլորտի կայուն զարգացում, որը կհավասարակշռի տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունությունը, ինչպես նաև կապահովի ոլորտի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը:
- Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու նպատակով Կառավարությունը նախատեսում է.
  - մշակել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր.
  - իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ ապահովելով հանքարդյունաբերությանը զբաղվելու համար անհրաժեշտ ընթացակարգերի (լիցենզավորում, թույլտվություններ, հողօգտագործման հետ կապված կանոնակարգումներ և այլն) պարզեցում և համալիրություն, ազդակիր համայնքների բնակչության կարծիքի և բիզնեսի շահերի հավասարակշռում.
  - բացահայտել \_\_\_\_\_ ընդերքօգտագործող \_\_\_\_\_ կազմակերպությունների \_\_\_\_\_ իրական սեփականատերերին, ստեղծել ու վարել իրական սեփականատերերի ռեգիստրը:
- Կառավարությունը միջոցներ կձեռնարկի նաև Հայաստանում հանքարդյունաբերական հումքի վերամշակման հնարավորինս երկար արտադրական շղթայի հիմնադրման համար՝ այս ընթացքում խստորեն պահպանելով բարձր բնապահպանական չափանիշները:

#### «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

- «Մենք իրականացնելու ենք շրջակա միջավայրի պաշտպանության հետեյալ թիրախային ծրագրերը.
  - 7. մշակելու ենք հանքարդյունաբերության՝ օրենսդրական դաշտի, ոլորտում արձանագրված խնդիրների, միջազգային լավագույն ստանդարտների վերլուծության վրա հիմնված ռազմավարություն, որի արդյունքում դրվելու են ոլորտի զարգացման ռազմավարական հիմքերն ու սկզբունքները, ինչպես նաև մշակելու ենք վերջիններից բխող օրենսդրական բարեփոխումներ:
  - 10. մեր քաղաքականությունը միտված է լինելու Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը եւ վերամշակող հանքարդյունաբերության զարգացման խթանմանը, ինչը կապահովի հանքանյութերի մշակման ամբողջական ցիկլը եւ կստեղծի տնտեսական հավելյալ արժեք: Ուստի, նվազեցնելու ենք խտանյութի եւ չվերամշակված հումքի արտահանումը՝ այն փոխարինելով վերամշակված հանքանյութի արտահանմամբ:»

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը երկար պատմություն ունի, որը սկսվում է դեռևս 18-րդ դարի վերջերից: Հայաստանում առկա են բազմաթիվ ռազմավարական կարևորություն ունեցող օգտակար հանածոների հարուստ պաշարներ, մասնավորապես՝ համաշխարհային շուկաներում բարձր պահանջարկ ունեցող պղինձ և

մոլիբդեն: Դրանցից բացի Հայաստանում արտադրվում են այլ մետաղներ այդ թվում՝ ոսկի, արծաթ, ցինկ, կապար, երկաթ և այլն: Հայաստանն ունի նաև այլ օգտակար հանածոների պաշարներ, դրանցից են, օրինակ՝ բազալտը, գրանիտը, կրաքարը, մարմարը և տուֆը, կիսաթանկարժեք քարեր, օրինակ՝ ագաթ, օբսիդիան, և այլ ոչ մետաղական օգտակար հանածոներ, ինչպիսիք են բենտոնիտը, դիատոմիտը, պեոլիտը և ցեոլիտները:

Ներկա պահին ամենախոշոր հանքը շահագործում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (Սյունիքի մարզ, Քաջարան) և ապահովում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ընդհանուր արդյունքի ավելի քան կեսը<sup>12</sup>: Ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գերակշռող մասը կազմում են փոքր քարհանքերը:

Մետաղական օգտակար հանածոների թվում առկա է 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 24 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 1 մոլիբդենային, 1 ալյումինահանքային, 1 մագնեզիումասիլիկատային ապարների և քրոմիտի, 3 երկաթահանքային հանքավայր: Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում, բացի հիմնական մետաղներից, բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, բիսմութ և այլն<sup>13</sup>:

Ներկայումս Հայաստանի լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանքը հիմնականում խտանյութերն են (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի խտանյութեր):

Ըստ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության<sup>14</sup>, ներկայումս Հայաստանում վավեր է մետաղական օգտակար հանածոների արդյունահանման 28 թույլտվություն և ավելի քան 400 թույլտվություն ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում: Այդ ամենով հանդերձ, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի, 2017 և 2018 թվականներին հանքարդյունաբերության ոլորտում գործել են ընդհանուր առմամբ 80 կազմակերպություն, որոնցից 9-ը ներգրավված են եղել մետաղական հանքաքարերի արդյունահանման գործընթացում, 70-ը՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում, մեկը՝ իրականացրել է հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն: 2017 թվականի համեմատությամբ, 2018-ին աճել է հանքագործական

<sup>12</sup> <https://www.eiti.am/hy/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80>

<sup>13</sup> <http://www.minenergy.am/page/472>

<sup>14</sup> <https://www.eiti.am/>

արդյունաբերության ոլորտում ընդգրկված աշխատողների միջին տարեկան ցուցանիշը՝ 8.720-ից հասնելով 8,881-ի<sup>15</sup>: Նույն ժամանակահատվածում, այս աճին զուգահեռ նվազել է արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ շուրջ 40 մլրդ դրամի չափով: Ի տարբերություն 2018-ի, 2019 թվականի հունվար-դեկտեմբերին նկատվել է հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի աճ՝ հասնելով մոտ 356 մլրդ դրամի՝ ինչը մոտ 15 մլրդ-ով ավելի է, քան 2017 թվականի ցուցանիշը:

**Աղյուսակ 6. Հանքագործական արտադրության ծավալն ընթացիկ գներով, հազ. դրամ**

|   | Արտադրության ծավալն ընթացիկ գներով, հազ. դրամ |             |             |                            |
|---|---|-------------|-------------|----------------------------|
|   | 2017  | 2018        | 2019        | 2020<br>հունվար-<br>հունիս |
| ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ           | 341,099,078                                   | 300,744,807 | 356,771,778 | 181,527,873                |
| <i>այդ թվում՝</i>   |   |             |             |                            |
| մետաղական հանքաքարի արդյունահանում                                    | 332,361,704                                   | 287,273,571 | 343,000,007 | 176,258,863                |
| հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր | 7,611,469                                     | 10,995,231  | 13,076,792  | 5,029,807                  |
| հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն               | 1,125,905                                     | 2,476,005   | 694,979     | 239,203                    |

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ընդ որում, մետաղական հանքաքարի արդյունահանման մասնաբաժինը ամբողջ արդյունաբերության մեջ 2017թ. կազմել է՝ 18,1%, 2018թ.՝ 14,8%, 2019թ.՝ 16,3%, իսկ 2020թ. հունվար-հունիսին՝ 20,3%: Ակնհայտ է, որ թեև 2018 թվականին որոշ չափով նկատվել է մետաղական հանքաքարի արդյունահանման նվազում, 2019 թվականին դրա ծավալներն ընթացիկ գներով աճել են՝ գերազանցելով նույնիսկ 2017 թվականի ցուցանիշը:

Ինչ վերաբերում է արտադրանքի թողարկմանը՝ բնեղեն արտահայտությամբ, ապա համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, 2019 թվականին ևս նկատվում է աճ: Օրինակ, պղնձի խտանյութի արտադրության ծավալները 2017 թվականին կազմել են 428.5 հազ. տոննա, 2018-ին՝ 317.4 հազ. տոննա, իսկ 2019-ին՝ 400.0 հազ. տոննա: Կամ՝ 2017 թվականին արդյունահանվել է 10 961.0 տոննա մոլիբդենի խտանյութ, 2018-ին՝ 11 110.0 տոննա, իսկ 2019-ին՝ 14 322.0 տոննա (29.9%-ով ավելի, քան 2018 թվականին): 2020 թվականի առաջին կիսամյակում հանքագործական արդյունաբերության արտադրանքի, հատկապես պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրության ծավալների աճն ավելի ցայտուն է՝ կազմելով համապատասխանաբար 16,6% և 1.8 անգամ ավելի՝ 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

<sup>15</sup> Սույն զեկույցի պատրաստման ընթացքում ՀՀ վիճակագրական կոմիտեն դեռևս չէր ամփոփել 2019 թվականի ցուցանիշները:

Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարումը հանդիսանում է ոլորտի կառավարման և նոր ներդրումների ներգրավման հիմնական նախապայմաններից մեկը: Այդ իսկ պատճառով, դեռևս 2015 թվականին Հայաստանի կառավարությունը սկսել էր «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը» (ԱՃԹՆ) միանալու գործընթացը, իսկ անդամակցության պաշտոնական հայտը ներկայացվեց 2016 թվականի դեկտեմբերին:

2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած նիստում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհուրդը հաստատեց Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը և Հայաստանին շնորհվեց ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ: Այսպիսով, ՀՀ-ն դարձավ 52-րդ երկիրը, որը ներդրում է ԱՃԹՆ-ի ստանդարտը: Ստանդարտի ներդրմամբ Հայաստանում նախատեսված է ստեղծել հարթակ կառավարության, արդյունահանող ընկերությունների և քաղաքացիական հասարակության փոխհամագործակցության համար, որն ուղղված է արդյունահանող ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: Յուրաքանչյուր տարի [www.eiti.am](http://www.eiti.am) կայքում հրապարակվում է ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ շրջանակում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցը:

Վերոհիշյալ գործընթացի շրջանակներում 2017 թվականից հրապարակվում են մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

2018 թվականի հունվարի 1-ին ՀՀ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն է ներկայացվել «ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման համար անհրաժեշտ միջոցառումների ճանապարհային քարտեզը»<sup>16</sup>, որն այնուհետև ամրագրվեց «ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2018թ. մարտի 29-ի N 12 արձանագրային որոշմամբ<sup>17</sup>: Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության առաջին ազգային զեկույցը հրապարակվեց 2019 թվականի հունվարի 30-ին:

Մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը հրապարակվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական

<sup>16</sup> [https://www.eiti.am/file\\_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO%20Roadmap\\_ARM.pdf](https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO%20Roadmap_ARM.pdf)

<sup>17</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=94551>

ռեգիստրի գործակալության [www.e-register.am](http://www.e-register.am) կայքում և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության Հայաստանյան էջում:

Այսպիսով, թեև հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ապահովման և իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակման խոստումն այս պահի դրությամբ կարելի է համարել կատարված, սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ դա նոր կառավարության նախաձեռնությունը չէր: **Թափանցիկության այս գործընթացը սկսել էր դեռևս 2016 թվականին և իր տրամաբանական շարունակությունն էր ստացել նոր իշխանության օրոք:** Այսինքն՝ նոր կառավարությունը խոստացել է կատարել մի բան, որն արդեն ընթացքի մեջ էր և պետք էր պարզապես շարունակել:

Միայն թափանցիկության և սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքները բավարար չեն ոլորտի զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման կամ օտարերկրյա ներդրողների ներգրավման համար: Այս առումով անչափ կարևոր է հանքարդյունաբերության ոլորտի ճիշտ քաղաքականության մշակումն ու վարումը: Հակառակ դեպքում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանը քաղաքային խիտ բնակչությամբ և փոքր հողատարածքով երկիր է, ոչ ճիշտ կամ անբավարար մշակված քաղաքականությունը կարող է ճակատագրական կամ աղետալի լինել բնակչության և երկրի տնտեսության համար:

Կառավարությունն իր ծրագրում հստակորեն սահմանել է համապարփակ օրենսդրության և հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության անհրաժեշտությունը: Պատասխանատու հանքարդյունաբերության քաղաքականության մասին բազմիցս հնչեցվել է նաև քաղաքացիական հասարակության և ոլորտի քննապահական ակտիվիստների կողմից: Այս ամենով հանդերձ, ներկայումս ՀՀ կառավարության կողմից չի հրապարակվել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Դեռևս 2018 թվականի նոյեմբերին, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալը հայտարարել էր, որ նախարարությունը մշակում է հանքարդյունաբերության ոլորտի նոր ռազմավարություն, որը **սակայն դեռևս չկա ու չի ներկայացվել հանրային քննարկման:** Ի դեպ, «ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշման առաջին հավելվածի 127-րդ կետով հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակման վերջնաժամկետ է սահմանված 2020 թվականի օգոստոսի երրորդ տասնօրյակը: Ինչը նշանակում է, որ նախագիծը պետք է արդեն իսկ ներկայացված լիներ հանրային քննարկման: Իրավական ակտերի նախագծերի միասնական կայքի մեր ուսումնասիրությունների արդյունքում սակայն, հնարավոր չեղավ գտնել այդ նախագիծը:

**Ըստ այդմ, դեռևս չի իրականացվել ՀՀ կառավարության մեկ այլ խոստում և՛ իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ:**

Խտանյութի և չվերամշակված հումքի արտահանման փոխարինումը վերամշակված հանքանյութի արտահանմամբ հարցին մենք դեռևս անդրադարձել էինք 2019 թվականին իրականացված արտահանման խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրությունում (2018-2019թթ. Ժամանակահատվածի համար)<sup>18</sup>: Համեմատության համար նշենք, որ 2020 թվականի հունվար-հունիս ամիսներին հանքահումքային արտադրանքի արտահանումը 2019 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 19.4%-ով՝ հասնելով 381 մլն ԱՄՆ դոլարի: Դա մեկ անգամ ևս վկայում է, որ առայժմ ո՛չ ՀՀ կառավարությունը և ո՛չ էլ «Իմ քայլը» դաշինքը **չեն ապահովում իրենց խոստման իրականացումը:**

### 3.2. Վերամշակող արդյունաբերություն

#### ՀՀ կառավարության ծրագիր

- Անհրաժեշտ դեպքերում վերանայվելու են վերամշակող արդյունաբերության առանձին ճյուղերում սահմանված այն կարգավորումները, որոնց պատճառով ձևավորվել են զարգացմանը խոչընդոտող անհաղթահարելի սահմանափակումներ:
- Միջոցներ են ձեռնարկվելու ԵԱՏՄ-ի շուկաներում վերամշակող արդյունաբերության առանձին ոլորտների նկատմամբ սահմանված ոչ տարիֆային կարգավորումների այնպիսի զարգացումների ուղղությամբ, որոնք էապես կպարզեցնեն մեր ձեռնարկությունների գործունեության պայմանները և կընդլայնեն այդ շուկաներում առաջխաղացման հնարավորությունները:

Վերամշակող արդյունաբերությունը Հայաստանի արդյունաբերության մեջ ունի խոշոր մասնաբաժին: 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերական արտադրանքի մեջ կազմում է շուրջ 69%՝ յոթ տոկոսային կետով ավելի, քան 2017 թվականին:

Վերամշակող արդյունաբերության մեծ մասը բաժին է ընկնում սննդամթերքի արտադրությանը (37.2%՝ 2019 թվականին), որին հաջորդում է ծխախոտի (13.4%) և խմիչքների արտադրությունը (12.6%):

18

<https://www.luys.am/img/artpic/small/e12612ab5bee4728f7d6%D4%B1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AD%D5%A9%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%B2%D5%B2%D5%BE%D5%A1%D5%AE%D5%80%D5%80%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

Ընդ որում սննդամթերքի արտադրության տեսակարար կշիռը վերամշակող արդյունաբերության մեջ 2017 թվականի համեմատ նվազել է 1.3 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում ավելացել է ծխախոտի և խմիչքների արտադրության մասնաբաժինը՝ կազմելով վերամշակող արդյունաբերության 13.4% և 12.6% 2019 թվականին, 2017 թվականի 13.0% և 12.4% համեմատությամբ: Հաշվի առնելով նշված բաշխվածությունը՝ ուսումնասիրության այս հատվածում մենք կներկայացնենք սննդամթերքի, ծխախոտի և խմիչքների արտադրության ոլորտները և այս ոլորտներում կառավարության կողմից ձեռնարկված քայլերը, եթե այդպիսիք կան:

Սակայն նախքան վերամշակող արդյունաբերության նշված ոլորտներին անդրադառնալը, հակիրճ ներկայացնենք կառավարության խոստումների իրականացման ընթացքը: Այսպիսով, վերամշակող արդյունաբերության վերոհիշյալ խոստումների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներն իրենց տեղն են գտել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշմամբ հաստատված հավելվածներում: ՀՀ կառավարության վերը նշված խոստումների իրականացման միջոցառումները սահմանված են ՀՀ կառավարության 650-Լ որոշման առաջին հավելվածի 260 և 261 կետերով:


Մասնավորապես վերամշակող արդյունաբերության ոլորտի զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանման նպատակով ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է իրականացնել «Տնտեսության ճյուղերի էներգախնայողության հետազոտության իրականացում, էներգատար ճյուղերի վերհանում»: Ըստ կառավարության՝ սույն միջոցառման իրականացման նպատակն է խթանել տնտեսության ճյուղերին կիրարկելու ժամանակակից և էներգախնայող տեխնոլոգիաներ, քանի որ ոչ ժամանակակից և էներգատար տեխնոլոգիաների պատճառով է, որ հայկական արտադրանքի ինքարժեքը բարձր է: Միջոցառման արդյունքում կմաշկվի էներգատարության նորմատիվներ:

Միակարծիք լինելով էներգաարդյունավետ և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտության մասով՝ կարծում ենք, որ այս միջոցառումը չի կարող էականորեն նվազեցնել վերամշակող արդյունաբերության զարգացմանը խոչընդոտող խնդիրները: Մեր կարծիքով, ՀՀ կառավարությունը նախ պետք է վերհաներ այդ խնդիրները, նոր մտածեր դրանց լուծման ուղիներ փնտրելու մասին: Էնարգատար տեխնոլոգիաների առկայությունը դա ոլորտի խնդիրների մի փոքր մասն է միայն, և միայն նորմատիվներ մշակելով՝ ոլորտի կազմակերպությունները չեն կարողանա հաղթահարել նույնիսկ այդ խնդիրը՝ քանի որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է զգալի ներդրումներ, որոնք, տեղական կազմակերպությունները, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունները, ի վիճակի չեն ներգրավել:



Ի դեպ, հարկ ենք համարում նշել, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2019 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույցում, որը հրապարակվել է ՀՀ կառավարության պաշտոնական կայքում<sup>19</sup> և հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականի փոտրվարի 27-ի թիվ 199-Ա որոշմամբ<sup>20</sup>, անդրադարձ չի կատարվել վերամշակող արդյունաբերության (նաև հանքարդյունաբերության) ոլորտում իրականացված աշխատանքներին և արդյունքներին: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ այս ուղղությամբ 2019 թվականին չեն կատարվել ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված աշխատանքները:

Գծապատկեր 5. Մշակող արդյունաբերությունն ըստ ճյուղերի, 2019թ.



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

<sup>19</sup> <https://www.gov.am/files/docs/3932.pdf>  
<sup>20</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139644>

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ի շուկաներում վերամշակող արդյունաբերության առանձին ոլորտների նկատմամբ սահմանված ոչ տարիֆային կարգավորումների վերանայմանը, ապա դրա իրականացման համար ՀՀ կառավարությունը նախատեսել էր մշակել տարիֆային և ոչ տարիֆային կարգավորման մասով ՀՀ համար զգայուն ապրանքների ցանկ և նախաձեռնել համապատասխան ընթացակարգեր՝ մաքսատուրքի դրույքաչափերի և/կամ ոչ տարիֆային միջոցների կիրառման առնչությամբ:

ՀՀ կառավարության կողմից այս ուղղությամբ ձեռնարկված քայլերից կարելի է համարել 2020 թվականի հունվարի 1-ից ավելի քան 600 անուն ապրանքների մասով ԵԱՏՄ շրջանակում մեկ տարով մաքսատուրքի արտոնության երկարաձգումը: Ինչպես հայտնի է, մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ՀՀ-ում կիրառվում էին ԵԱՏՄ միասնական մաքսային սակագների դրույքաչափերից տարբերվող դրույքաչափեր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 113 որոշմամբ սահմանված ապրանքների համար: Ըստ էության, երկարաձգվել է Հայաստանին տրվող արտոնությունների ժամկետը՝ սակայն, վերանայելով ապրանքների ցանկը<sup>21</sup>: Մասամբ համարելով այս հետաձգումը նոր կառավարության ձեռքբերում, պետք է փաստել, որ այդ ցանկը նոր կառավարության կողմից մշակված զգայուն ապրանքների ցանկ չէ. այն դեռևս մշակվել էր նախորդ իշխանության օրոք:

Ինչ վերաբերում է ոչ սակագնային կարգավորումներին, մեր ուսումնասիրությունները չբացահայտեցին զգայուն ապրանքների մասով ոչ սակագնային կարգավորումներին առնչվող որևէ աշխատանք կամ պետական մարմինների կողմից կատարված որևէ հետազոտություն:

Այսպիսով, վերամշակող արդյունաբերության ոլորտի զարգացման առումով ՀՀ կառավարության տրված խոստումները **չի կարելի է համարել ամբողջությամբ իրականացված**:

### 3.2.1. Ծխախոտի արտադրություն

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2017-2019 թվականներին ծխախոտի արտադրությունը աճել է միջինը 10%-ով: 2017-2018 թվականներին ոլորտում գործել է համապատասխանաբար չորս և վեց կազմակերպություն, որոնց աշխատողների թվաքանակը 2017 թվականին կազմել է 3 497 մարդ, իսկ 2018թ.՝ 4 314 մարդ: 2019 թվականին կազմակերպությունների թվաքանակը չի ենթարկվել փոփոխությունների, սակայն աճել է ոլորտում աշխատողների միջին թվաքանակը՝ հասնելով 4,495-ի: Հիշյալ ընկերություններից մի քանիսը ներառվել են խոշոր հարկ վճարողների ցանկում, ինչպես

<sup>21</sup> ԵՏՀ կոլեգիայի 2020թ. ապրիլի 28-ի թիվ 62 որոշում՝ [https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01425463/err\\_30042020\\_62?fbclid=IwAR2UMCdaRuVDgdM6gCli\\_0YBQFjRqEBpB1uEJ6Ostgx\\_SfDTN6G3naUTQ6Q](https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01425463/err_30042020_62?fbclid=IwAR2UMCdaRuVDgdM6gCli_0YBQFjRqEBpB1uEJ6Ostgx_SfDTN6G3naUTQ6Q)

շահութահարկի (50 մլն դրամ և ավելի), այնպես էլ եկամտային հարկի (50 մլն դրամ և ավելի) մասով:

**Աղյուսակ 7. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները 2017-2020թթ., ծխախոտային արտադրատեսակների արտադրություն**

|   | Կազմակերպությունների քանակը |       |       | Աշխատողների միջին տարեկան թվաքանակը, մարդ |        |        | Արտադրության ծավալն ընթացիկ գներով, մլն դրամ |           |           |                     |
|---|-----------------------------|-------|-------|---|--------|--------|--|-----------|-----------|---------------------|
|   | 2017                        | 2018  | 2019  | 2017                                      | 2018   | 2019   | 2017   | 2018      | 2019      | 2020 հունվար-հունիս |
| <b>ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b>          | 2,518                       | 2,518 | 2,820 | 49,785                                    | 58,680 | 67,334 | 1,209,503                                    | 1,352,067 | 1,468,722 | 578,319             |
| <i>որից՝</i>                              |                             |       |       |   |        |        |  |           |           |                     |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 4                           | 6     | 6     | 3,497                                     | 4,314  | 4,495  | 157,747                                      | 178,368   | 196,370   | 70,088              |

**Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե**

Ծխախոտային արտադրատեսակների արտադրության մասնաբաժինը կազմել է՝

- ամբողջ արդյունաբերության մեջ. 2017թ.՝ 8,6%, 2018թ.՝ 9.2%, 2019թ.՝ 9,3%, 2020թ. հունվար-հունիս՝ 7,8 %.
- մշակող արդյունաբերության մեջ 2017թ.՝ 13,0%, 2018թ.՝ 13,3%, 2019թ.՝ 13,4%, 2020թ. հունվար-հունիսին՝ 12,1%:

Թեև 2017-2019 թվականներին նկատվում է արտադրության աճ, 2020 թվականի առաջին կիսամյակում արտադրության ծավալները կրճատվել են՝ ինչը կարծում ենք պայմանավորված է COVID-19-ի սահմանափակումների հետ: Այնուամենայնիվ անհրաժեշտ է ընդգծել, որ ծխախոտի արտադրության ոլորտում այդ անկումը կազմել է մոտ 23%:

Հիմնական արտադրատեսակը սիգարետներն են, որոնք արտադրվել են հետևյալ **ծավալներով**.

|  | 2017 թ. հունվար-դեկտեմբեր | 2018 թ. հունվար-դեկտեմբեր | 2019 թ. հունվար-դեկտեմբեր | 2020թ. հունվար-հունիս |
|--|---------------------------|---------------------------|---------------------------|-----------------------|
| Սիգարետներ, սիգարներ, ծխազլանակներ և համանման արտադրատեսակներ ծխախոտից կամ դրա փոխարինիչներից, մլն հատ | 28 476.6                  | 31 602.0                  | 33 874.0                  | 12 923.8              |

2020 թվականի փետրվարի 13-ին ընդունված «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի

նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքը սահմանում է ծխախոտային արտադրատեսակների, դրանց փոխարինիչների ներմուծմանը, արտադրությանը, իրացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները, փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող հիմնական պահանջները, օգտագործման և իրացման արգելքներն ու սահմանափակումները:

Այսպես, համաձայն օրենքի՝ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում իրացվելու նպատակով արտադրվող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները պետք է համապատասխանեն կառավարության կողմից ընդունված համապատասխան տեխնիկական կանոնակարգերին: Հայաստանում իրացվող ծխախոտային արտադրատեսակները ենթակա են նաև համապատասխանության գնահատման:

Օրենքի համաձայն՝ ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ կառավարության սահմանած անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան, ընդ որում՝ ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր տուփ պարտադիր պետք է պարունակի ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ հիմնական նախազգուշացման տեքստ, որը պետք է զետեղվի ցանկացած տուփի երկու առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ նախազգուշացման տեքստը՝ մյուսի վրա:

Այս սահմանափակումների հետ մեկտեղ, ծխախոտային արտադրանքի համար գործում է նաև ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը: Վերջինս սահմանում է միության մաքսային տարածքում կիրառման ու կատարման համար պարտադիր պահանջներ՝ միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող ծխախոտային արտադրանքի նկատմամբ, ինչպես նաև պահանջներ՝ ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի վրա դրա ազատ տեղափոխումն ապահովելու նպատակով զետեղվող տեղեկության (մակնշման) նկատմամբ:

Միաժամանակ, ՀՀ վերոհիշյալ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտահանելու նպատակով արտադրվող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները կարող են արտադրվել ներմուծող երկրի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը, ներմուծումը, իրացումը, եթե ծխախոտային արտադրատեսակների ծխում նիկոտինի և խեժի պարունակությունը գերազանցում է ՀՀ կառավարության հաստատած թույլատրելի սահմանը: Նշյալ պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից

արտահանվող ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վրա:

Այնուամենայնիվ, սույն օրենքի հեղինակների բնորոշմամբ՝ օրենքի ընդունմամբ կարգավորման դաշտից դուրս են մնում նաև ԵԱՏՄ 035/2014 տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան ՀՀ-ում արտադրվող և ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ՀՀ ներմուծվող ծխախոտային արտադրանքը, որը պետք է կարգավորվի առանձին իրավական ակտով: Այդ բացը լրացնելու նպատակով, 2020 թվականի ապրիլին հանրային քննարկման ներկայացվեց «Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգման ոլորտի Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով ՀՀ-ում գործողության մեջ է դրվում ԵԱՏՄ 035/2014 տեխնիկական կանոնակարգը: Որոշման այս նախագիծը սակայն, մինչ օրս չի ընդունվել:

Իրավական դաշտի վերոհիշյալ ոչ հստակ կարգավորումները և համապատասխան կարգավորումների բացակայությունը անհարկի դժվարություններ են ստեղծում տեղական արտադրողների և արտահանողների համար: Այս վիճակը չի կարելի համարել ոլորտի զարգացմանը խոչընդոտող անհաղթահարելի սահմանափակումների վերացմանն ուղղված գործողություն:

Օրենքով ամրագրվել են նաև սահմանափակումներ ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման վայրերի, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) օգտագործման համար: Այսպես, արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման (վաճառքի) խթանումը հետևյալ ձևերով՝

- 1) այլ ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների գովազդում խոսքի կամ ձայնի կամ պատկերի միջոցով ներկայացնել ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) օգտագործումը.
- 2) այլ ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների գովազդում ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ

- բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների հիշատակումը կամ դրանց ներառումը.
- 3) ծխախոտային արտադրատեսակների նմանակ հանդիսացող սննդամթերքի կամ խաղալիքների արտադրությունը կամ ներմուծումը կամ իրացումը.
  - 4) Հայաստանի Հանրապետությունում երեխաների համար արտադրված և նախատեսված տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր, թատերական ներկայացումներ հեռուստատեսության, ռադիոյի կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ դրանց օգտագործման պատկերումը:

Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսապատկերումը կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր՝ հեռուստատեսության, ռադիոյի կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով):

Հարկ է նշել, որ նշված և այլ սահմանափակումները ուժի մեջ են մտնելու աստիճանաբար և ամբողջ ծավալով կիրառվելու են 2024 թվականից:

2019թ. դեկտեմբերի 19-ին ԵԱՏՄ երկրների փոխվարչապետները ստորագրեցին «Ծխախոտային արտադրանքի ակցիզների ոլորտում հարկային քաղաքականության իրականացման սկզբունքների մասին» համաձայնագիրը<sup>22</sup>: Համաձայնագիրը թույլ կտա ներդաշնակեցնել 2402 20 ԱՏԳ ԱԱ ծածկագրի ներքո դասվող ծխախոտի ակցիզների դրույքաչափերը և դրանով իսկ ապահովել պայմաններ ԵԱՏՄ-ում ծխախոտային արտադրանքի շուկայի գործունեության համար:

Ըստ համաձայնագրի՝ 2024 թվականից ծխախոտի ակցիզի ազգային դրույքաչափերը հաշվարկելիս, ԵԱՏՄ-ի երկրները առաջնորդվելու են 1 հազար ծխախոտի համար 35 եվրո ելակետային դրույքաչափով՝ դեպի նվազեցում կամ դեպի ավելացում 20%-ից ոչ ավելի շեղումով:

Քանի որ ակցիզի փաստացի դրույքաչափերը սահմանվում են ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրությամբ, այս կարգավորումը, ինչ խոսք, կարող է պարզեցնել

<sup>22</sup> <http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/24-12-2019-1.aspx>

Ծխախոտի արտադրությամբ զբաղվող հայկական կազմակերպությունների գործունեությունը ԵԱՏՄ շուկայում և կարող է նպաստել այդ շուկայում նրանց առաջխաղացման հնարավորությանը: Սակայն, մենք չենք կարող անվանել այն հայկական կողմի նախաձեռնություն կամ ԵԱՏՄ շուկայում միայն հայկական արտադրողի գործունեությանը դրական ազդեցություն ունեցող միջոցառում: Ներդաշնակեցման այս մոտեցումը դրական է ոչ միայն հայկական, այլև ԵԱՏՄ տարածքում գործող և ծխախոտ արտադրող այլ կազմակերպությունների համար:

Հայաստանում ակցիզային հարկով հարկման ենթակա ծխախոտի արտադրանքի նկատմամբ (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարեթները) գործում են հետևյալ դրույքաչափերը.

| Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի   | Ապրանքախմբի անվանումը                | Հարկման բազայի չափման միավորը | Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ) |                            |                            |                            |
|--|--------------------------------------|-------------------------------|--------------------------------------|----------------------------|----------------------------|----------------------------|
|  |                                      |                               | 2020 թվականի հունվարի 1-ից           | 2021 թվականի հունվարի 1-ից | 2022 թվականի հունվարի 1-ից | 2023 թվականի հունվարի 1-ից |
| 2402<br>(բացառությամբ<br>2402 10 00011<br>2402 90 00011<br>2402 10 00012<br>2402 90 00012) | Ծխախոտի արտադրանք                    | 1 000 հատ                     | 9 625                                | 11 070                     | 12 730                     | 14 640                     |
| 2402 10 00011<br>2402 90 00011   | սիգար                                | 1 000 հատ                     | 605 000                              |                            |                            |                            |
| 2402 10 00012<br>2402 90 00012   | սիգարեթ                              | 1 000 հատ                     | 16 500                               |                            |                            |                            |
| 2403<br>(բացառությամբ<br>2403 99 90 090)   | Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ | 1 կգ                          | 1 500                                |                            |                            |                            |
| 2403 99 90 090   | Ծխախոտի արտադրանք                    | 1 000 հատ                     | 2 000                                | 2 300                      | 2 700                      | 3 100                      |

### 3.2.2. Սննդամթերքի արդադրություն

Սննդամթերքի արտադրությունը հանդիսանում է մշակող արդյունաբերության ամենախոշոր ճյուղերից մեկը՝ ապահովելով ամբողջ մշակող արդյունաբերական արտադրանքի ծավալի 37,2%-ը 2019 թվականին<sup>23</sup>: Ընդ որում, հարկ է նշել, որ այս մասնաբաժինը նվազել է 2018 և 2017 թվականների համեմատ մոտ մեկ տոկոսային կետով, թեև ծավալային առումով 2018 թվականի համեմատ գրանցվել է աճ 4,1%-ով:

<sup>23</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_19a\\_121.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_19a_121.pdf)

Հատկապես բարձր տեմպերով են աճել մսի կիսապատրաստվածքների (2,2 անգամ), կարագի և կաթնային մածուկների (1,7 անգամ), հեղուկ կաթի (39,1%) և թթվասերի (34,3%) արտադրության ծավալները: 2018 թվականի համեմատ անկում է արձանագրվել մի շարք ոլորտներում՝ զտած յուղեր (31,1%), թարմ միս (3,3%), երշիկեղեն և համանման մսամթերք (2,1%):

**Աղյուսակ 8. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները 2017-2020թթ., սննդամթերքի արտադրություն**

|                                  | Կազմակերպությունների քանակը |              |              | Աշխատողների միջին տարեկան թվաքանակը, մարդ |               |               | Արտադրության ծավալն ընթացիկ գներով, մլն դրամ |                  |                  |                     |
|----------------------------------|-----------------------------|--------------|--------------|---|---------------|---------------|--|------------------|------------------|---------------------|
|                                  | 2017                        | 2018         | 2019         | 2017                                      | 2018          | 2019          | 2017   | 2018             | 2019             | 2020 հունվար-հունիս |
| <b>ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b> | <b>2,518</b>                | <b>2,518</b> | <b>2,820</b> | <b>49,785</b>                             | <b>58,680</b> | <b>67,334</b> | <b>1,209,503</b>                             | <b>1,352,067</b> | <b>1,468,722</b> | <b>578,319</b>      |
| <i>որից՝</i>                     |                             |              |              |   |               |               |  |                  |                  |                     |
| սննդամթերքի արտադրություն        | 830                         | 884          | 913          | 14,162                                    | 16,197        | 20,884        | 466,051                                      | 524,804          | 547,646          | 196,711             |

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության՝ ոլորտում 2017 և 2018 թվականներին գործել են համապատասխանաբար 830 և 884 կազմակերպություններ, որոնք աշխատատեղ են ապահովել համապատասխանաբար 14,162 և 16,197 անձի համար: 2019 թվականին այդ կազմակերպությունների թիվը հասել է 913-ի՝ աշխատատեղով ապահովելով 20,884 անձի համար: Ոլորտում գործող կազմակերպությունների այս ցուցանիշը չի կարելի համարել ամբողջական, քանի որ վիճակագրական կոմիտեն ներկայացնում է միայն այն կազմակերպությունների քանակը, որոնք ներկայացրել են վիճակագրական հաշվետվություններ<sup>24</sup>:

Սննդամթերքի ոլորտի հիմնական արտադրատեսակներն են առաջին սպառման ապրանքները՝ թարմ հացը, ալյուրը, միսը և շաքարավազը:

**Աղյուսակ 9. Սննդամթերքի արտադրության հիմնական տեսակների ծավալները, 2017-2019թթ.**

|                  | 2017 թ.   | 2018 թ.   | 2019 թ.   |
|------------------|-----------|-----------|-----------|
| Հաց, տոննա       | 271 300.0 | 264 757.8 | 271 471.4 |
| Ալյուր, տոննա    | 169 170.9 | 134 643.5 | 176 711.7 |
| Միս, տոննա       | 85 587.8  | 86 877.2  | 84 024.1  |
| Շաքարավազ, տոննա | 48 630.0  | 57 991.0  | 59 981.0  |
| Պանիր, տոննա     | 19 140.7  | 21 248.7  | 22 444.2  |

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի

<sup>24</sup> Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գնահատականների՝ այսօր Հայաստանում գործում է շուրջ 1600 սննդամթերքի արտադրության ձեռնարկություն



Ըստ էության, սրանք այն ապրանքատեսակներն են, որոնք հիմնականում սպառվում են երկրի ներսում և նախատեսված չեն արտահանման համար (բացառությամբ, թերևս, պանրի): Հետևաբար, այս ապրանքների արտադրության ծավալների աճն այդքան էլ պայմանավորված չէ ԵԱՏՄ երկրներում ոչ սակագնային կարգավորումների ուղղությամբ կառավարության ձեռնարկած քաղաքականությամբ կամ ոչ սակագնային կարգավորումների պարզեցմամբ:

2020 թվականի հուլիսին գյուղատնտեսության, սննդի արտադրության, վերամշակող և սպասարկման ոլորտների մի խումբ ընկերությունների ղեկավարների հետ հանդիպման ընթացքում<sup>25</sup> Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը նշել է, որ պարենի անվտանգությունը պարենի հավասարակշռված արտադրությունն է և առևտուրը: «Մեր դեպքում լավագույն ճանապարհը պետք է լինի Հայաստանը դարձնել գյուղատնտեսական մթերքների և սննդի միջազգային առևտրի կենտրոն: Մենք պետք է արտահանենք ամենաբարձր որակի ապրանքներ, որովհետև քանակով չենք կարողանալու մրցել: Մրցունակության ձևակերպումը պետք է ավելի շատ ուղղված լինի որակին»:

Սննդամթերքի անվտանգության, որակի ենթակառուցվածքների արդիականացման, սննդամթերքի արտադրությունների տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտությունն ընդգծված է ՀՀ կառավարության ծրագրերում: Ինչպես արդեն նշվեց, վերամշակող արդյունաբերության ոլորտում կառավարությունը դա տեսնում է հիմնականում էներգաարդյունավետության նորմեր սահմանելու միջոցով:

Ոչ սակագնային կարգավորումների առումով, սննդամթերքի անվտանգությանն առնչվող հարցերը կանոնակարգվում են ՀՀ օրենքներով և դրանից բխող իրավական ակտերով, սննդամթերքի անվտանգությանն և սննդամթերքի առանձին տեսակների (օրինակ՝ միս/մսամթերք, կաթ/կաթնամթերք, ձուկ/ձկնամթերք, հացահատիկ և այլն) անվտանգությանն առնչվող ԵԱՏՄ և ՀՀ տեխնիկական կանոնակարգերով, միջազգային պայմանագրերով:

Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և սննդամթերքի անվտանգության վերաբերյալ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի՝ սննդամթերքի արտադրության գործընթացի իրականացման ժամանակ արտադրողի կողմից պետք է պահպանվեն վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի (HACCP) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը: Գաղտնիք չէ, որ այս համակարգը ներկայումս դեռևս ամբողջությամբ ներդրված չէ Հայաստանում: Ավելին, դրա պարտադիր ներդրման պահանջը պարբերաբար հետաձգվում է՝ բիզնեսի պատրաստ չլինելու պատճառով: Թեև դա սննդամթերքի անվտանգության ապահովման նվազագույն պահանջն է:

<sup>25</sup> <https://www.president.am/hy/press-release/item/2020/07/02/President-Armen-Sarkissian-met-with-businessmen/>

Ուսումնասիրության շրջանակներում փորձեցինք հետազոտել ԵԱՏՄ այն իրավական ակտերը, որոնք սահմանում են ոչ սակագնային կարգավորումներ, և որոնք վերափոխվել են իշխանափոխությունից հետո և կարող են դրական ազդեցություն ունենալ տեղական արտադրողների համար: Այդ նպատակով օգտագործվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային-սակագնային և ոչ սակագնային կարգավորման վարչության կողմից հրապարակված իրավական ակտերը և դրանց նախագծերը: Իհարկե, ԵԱՏՄ կայքէջերում չգտնվեց հայկական կողմի նախաձեռնությունների մասին որևէ տեղեկատվություն: ԵԱՏՄ տարածքում սննդամթերք վերամշակող կազմակերպությունների սակագնային կարգավորումների պարզեցման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին լուր է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը<sup>26</sup>: ԵԱՏՄ տարածքում սակագնային կարգավորումների պարզեցման ուղղությամբ իրականացված աշխատանքներ չի ներկայացված նաև ՀՀ կառավարության կողմից հրապարակված ՀՀ կառավարության ծրագրի 2019 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցում<sup>27</sup>, ինչը, կարծում ենք, այդպիսի աշխատանքների բացակայության պատճառով է:

### 3.2.3. Խմիչքների արտադրություն

Մշակող արդյունաբերության մյուս կարևոր ոլորտը խմիչքների արտադրությունն է: Հայաստանը պատմականորեն աչքի է ընկել ալկոհոլային խմիչքների, հատկապես գինու և կոնյակի արտադրությամբ, իր ուրույն տեղը զբաղեցնելով նախ նախկին Խորհրդային Միության տարածքում, այսօր էլ՝ ԵԱՏՄ երկրների շուկայում և արտերկրում: Պատահական չէ, որ խմիչքների արտադրությունը կազմում է մշակող արդյունաբերության ընդհանուր արտադրանքի 11,3%՝ 2018 թվականին և 12,6%՝ 2019 թվականին: Ոլորտի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ արտադրանքի զգալի մասն արտահանվում է՝ իր զգալի ներդրումն ունենալով Հայաստանի արտահանման ցուցանիշների մեջ: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ խմիչքների արտադրության ծավալների դինամիկան ունի հետևյալ տեսքը.

<sup>26</sup> <https://www.mineconomy.am/news/1959>

<sup>27</sup> <https://www.gov.am/files/docs/3932.pdf>

**Աղյուսակ 10. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները 2017-2020թթ., խմիչքների արտադրություն**

|                                  | Կազմակերպությունների քանակը <sup>28</sup> |              |              | Աշխատողների միջին տարեկան թվաքանակը, մարդ |               |               | Արտադրության ծավալն ընթացիկ գներով, մլն դրամ |                  |                        |                     |
|----------------------------------|---|--------------|--------------|---|---------------|---------------|--|------------------|------------------------|---------------------|
|                                  | 2017                                      | 2018         | 2019         | 2017                                      | 2018          | 2019          | 2017   | 2018             | 2019 հունվար-դեկտեմբեր | 2020 հունվար-հունիս |
| <b>ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b> | <b>2,518</b>                              | <b>2,518</b> | <b>2,820</b> | <b>49,785</b>                             | <b>58,680</b> | <b>67,334</b> | <b>1,209,503</b>                             | <b>1,352,067</b> | <b>1,468,722</b>       | <b>578,319</b>      |
| <i>որից՝</i>                     |   |              |              |   |               |               |  |                  |                        |                     |
| խմիչքների արտադրություն          | 134                                       | 147          | 165          | 5,801                                     | 6,938         | 7,528         | 149,514                                      | 152,917          | 184,610                | 69,732              |


Խմիչքների արտադրության մասնաբաժինը մշակող արդյունաբերության մեջ 2017թ. կազմել է 12,4%, 2018թ.՝ 11,3%, 2019թ.՝ 12,6%, 2020թ. հունվար-հունիսին՝ 12,1%:

Խմիչքների արտադրության զգալի մասը (մոտ 204 հազ լիտր 2019 թվականին) բաժին է ընկնում ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությանը՝ մրգահյութեր, բանջարահյութեր, հանքային և բնական ջրեր ու այլ ոչ ալկոհոլային խմիչքներ: Ալկոհոլային խմիչքներից Հայաստանում հիմնականում արտադրվում է օղի, լիկյոր, կոնյակ, վիսկի, գինի և գարեջուր (ընդհանուր՝ մոտ 89 հազար լիտր 2019 թվականին):

Ալկոհոլային խմիչքների զգալի մասը բաժին է ընկնում կոնյակի արտադրությանը, որը 2019 թվականի ընթացքում աճել է ավելի քան 40%՝ 2018 թվականի համեմատ: 2019 թվականին աճել է նաև գարեջրի, գինու և օղու արտադրությունը՝ համապատասխանաբար 11%, 31% և 19%-ով: Թեև Հայաստանը չի համարվում վիսկի արտադրող երկիր, վերջին տարիներին սկսվել էր այդ խմիչքի արտադրությունը Հայաստանում և դրա արտահանումը Մերձավոր Արևելքի երկրներ: Այնուամենայնիվ, 2017 թվականից նկատվում է այս խմիչքի արտադրության անկում՝ տարեկան 2016թ.՝ 1,142 հազ. լիտրից հասնելով 2019թ.՝ 713 հազ. լիտր:

<sup>28</sup> Սույն ցուցանիշները հաշվառվում են տարեկան կտրվածքով և 2019թ. տվյալները, համաձայն 2020թ. վիճակագրական ծրագրի, կամփոփվեն սույն թվականի օգոստոսին, ինչը զեկույցի պատրաստման ընթացքում դեռևս չէր հրապարակվել:

Գծապատկեր 6. Ալկոհոլային խմիչքների արտադրությունը Հայաստանում 2016-2019թթ., հազ. լիտր



Աղբյուր ՀՀ ՎԿ

2020 թվականի հունվար-հունիս ամիսներին նկատվել է այս խմիչքների արտադրության անկում 2019 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19 համավարակի դեմ պայքարի սահմանափակումներով: Այսպես, 2020 թվականի հունվար-հունիսին, 2019 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ օղու արտադրությունը նվազել է շուրջ 20%-ով, խաղողի գինու արտադրությունը՝ 31.7%-ով, կոնյակի արտադրությունը՝ 15%-ով, իսկ վիսկիի արտադրությունը՝ 77.2%-ով:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, ոլորտում 2017 և 2018 թվականներին գործել են համապատասխանաբար 134 և 147 կազմակերպություններ, որոնք նշված ժամանակահատվածում ապահովել են համապատասխանաբար 5,801 և 6,938 աշխատատեղ: 2019 թվականին ավելացել է գործող կազմակերպությունների թիվը՝ հասնելով 165-ի՝ 7,528 աշխատատեղով:

2018 թվականի դեկտեմբերի 5-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդն ընդունեց «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» թիվ 98 տեխնիկական կանոնակարգը<sup>29</sup>: Տեխնիկական կանոնակարգը սահմանում է ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքներում կիրառման և կատարման համար պարտադիր՝ ալկոհոլային արտադրանքին ներկայացվող անվտանգության պահանջները, դրանց առնչվող՝ ալկոհոլային արտադրանքի արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև

<sup>29</sup> [https://docs.eaeunion.org/\\_layouts/15/Portal.EEC.NPB/Pages/Download.aspx?siteid={e1f13d1d-5914-465c-835f-2aa3762eddda}&webid=9260b414-defe-45cc-88a3-eb5c73238076&docguid=21685da5-583e-4997-8173-6a2469f5b75b&lcid=1067&type=document](https://docs.eaeunion.org/_layouts/15/Portal.EEC.NPB/Pages/Download.aspx?siteid={e1f13d1d-5914-465c-835f-2aa3762eddda}&webid=9260b414-defe-45cc-88a3-eb5c73238076&docguid=21685da5-583e-4997-8173-6a2469f5b75b&lcid=1067&type=document)

ալկոհոլային արտադրանքի մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները:

Տեխնիկական կանոնակարգը սահմանում է այն չափանիշները, որով արտադրանքը համարվում է ալկոհոլային, ինչպես նաև ալկոհոլային արտադրանքի տեսակները և անվանումները: Մասնավորապես, ըստ կանոնակարգի, ալկոհոլային արտադրանքի ցանկին են դասվում նաև այն սննդային ապրանքները, որոնք արտադրված են էթիլ սպիրտի (կամ առանց դրա) օգտագործմամբ, որն արտադրված է սննդային հումքից եւ (կամ) սպիրտ պարունակող սննդամթերքից որում էթիլ սպիրտի ծավալային մասը 0,5 տոկոսից ավելի է: Կանոնակարգը ներկայացնում է նաև ալկոհոլային խմիչքների նույնականացման հստակ չափորոշիչներ, ինչպես նաև ԵԱՏՄ տարածքում շրջանառության ենթակա խմիչքների անվանումները: Համաձայն որոշման՝ կանոնակարգը ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկրորդ տարում, այն է՝ 2021 թվականին:

Հաշվի առնելով նշված ժամկետը՝ ակնկալվում էր, որ ՀՀ կառավարությունը կամ դրա լիազորված մարմինը մինչ այդ կտեղեկացներ բիզնեսին ընդունված իրավական ակտի, դրանով նախատեսված կանոնակարգումների և պահանջների մասին: Մեր ուսումնասիրությունը չբացահայտեց որևէ այդպիսի նախաձեռնություն պետական կառավարման մարմինների կողմից:

Խմիչքներին առնչվող մեկ այլ կարևոր քայլ կարելի է համարել ԵԱՏՄ տարածքում ալկոհոլային խմիչքների միասնական շուկայի կանոնակարգման համաձայնագրի մշակումը: Մասնավորապես, 2019 թվականի հունիսի 21-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդն ընդունեց ալկոհոլային խմիչքների ակցիզային հարկային քաղաքականության վարման վերաբերյալ համաձայնագիրը: Համաձայնագրով ԵԱՏՄ անդամ պետությունները համաձայնվում են ներդաշնակեցնել ալկոհոլային խմիչքների ազգային օրենսդրությունները և ակցիզային հարկերը: Համաձայնագրում մասնավորապես նախատեսվում է ակցիզային դրույքաչափերի մոտարկում՝ ելակետային դրույքաչափի և դրանից շեղումների թույլատրելի մակարդակները սահմանելու միջոցով: Ի դեպ, այս շեղումները տարբերվում են ըստ երկրների՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացածության աստիճանը: Ալկոհոլային խմիչքի դեպքում ակցիզային հարկի ելակետային դրույքաչափ է սահմանվում սննդային հիմքով 100 տոկոսանոց էթիլ սպիրտի մեկ լիտրի համար՝ 9 եվրո՝ 9%-ից բարձր էթիլ սպիրտ պարունակող ալկոհոլային արտադրանքի համար: Ակցիզային այս դրույքաչափը կկիրառվի 2024 թվականից, եթե այն անցնի բոլոր երկրների ներքին ընթացակարգերն ու մտնի ուժի մեջ: Իհարկե, այս թեման դեռևս գտնվում է քննարկման փուլում, սակայն, մեր ուսումնասիրությունը կրկին չգտավ պետական մարմինների կողմից ձեռնարկված տեղեկատվական կամ հանրային քննարկման միջոցառման մասին որևէ տեղեկատվություն: Իսկ նմանատիպ միջոցառումները ոչ միայն

անհրաժեշտ են բիզնեսի կարծիքին ծանոթանալու համար, այլև բիզնեսի համար՝ փոփոխություններին նախօրոք պատրաստվելու տեսանկյունից:

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում ներկայացնել ալկոհոլային խմիչքների դեպքում Հայաստանում այսօր գործող ակցիզային հարկի դրույքաչափերը.

| Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի   | Ապրանքախմբի անվանումը                            | Հարկման բազայի չափման միավորը               | Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)  |                       |                        |                       |
|--|--|---|---|-----------------------|------------------------|-----------------------|
|  |  |   | 2020 թ. հունվարի 1-ից   | 2021 թ. հունվարի 1-ից | 2022 թ.ի հունվարի 1-ից | 2023 թ. հունվարի 1-ից |
| 2207   | էթիլ սպիրտ                                       | 1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) | 2600  | 3380                  | 4400                   | 5700                  |
| 2208<br>(բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40) | սպիրտային խմիչքներ                               | 1 լիտր                                      | 1560  | 2030                  | 2640                   | 3430                  |
| 2208 90 330 0<br>2208 90 380 0<br>2208 90 480 0  | պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի | 1 լիտր                                      | 800   |                       |                        |                       |
| 2208 20  | կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թուրմեր           | 1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) | ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3000<br>բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3500<br>գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000<br>դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 8500<br>ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 |                       |                        |                       |

| Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի                                      | Ապրանքախմբի անվանումը   | Հարկման բազայի չափման միավորը | Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)                          |                       |                        |                       |
|---|---|-------------------------------|---|-----------------------|------------------------|-----------------------|
|   |   |                               | 2020 թ. հունվարի 1-ից   | 2021 թ. հունվարի 1-ից | 2022 թ.ի հունվարի 1-ից | 2023 թ. հունվարի 1-ից |
|   |   |                               | զ. 20 և ավելի տարի հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 22000 |                       |                        |                       |
| 2208 30<br>2208 40  | վիսկի, ռոմ և այլ սպիրտային թուրմեր  | 1 լիտր                        | 7000  |                       |                        |                       |
| 2203  | գարեջուր  | 1 լիտր                        | 130   |                       |                        |                       |
| 2204  | խաղողի գինի   | 1 լիտր                        | 150   |                       |                        |                       |
| 2205  | վերմուտ և խաղողի այլ գինիներ  | 1 լիտր                        | 1000  |                       |                        |                       |
| 2206<br>(բացառությամբ<br>2206 00 390<br>2206 00 590<br>2206 00 890) | խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային, հատապտղային, մրգային գինիների և գինենյութի | 1 լիտր                        | 270   |                       |                        |                       |

ԱՏԳ ԱԱ 2207, 2208 (բացառությամբ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40), 2402 (բացառությամբ 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012 2402 90 00012) և 2403 99 90 090 ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է վերոհիշյալ դրույքաչափերով:

Վերոհիշյալ աղյուսակի ԱՏԳ ԱԱ մյուս ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է դրույքաչափերի և ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով:

Ակցիզային հարկի հաշվարկման գործակիցները բերված են ստորև.

|  | 2020թ.<br>հունվարի<br>1-ից | 2021թ.<br>հունվարի<br>1-ից | 2022թ.<br>հունվարի<br>1-ից | 2023թ.<br>հունվարի<br>1-ից |
|--|----------------------------|----------------------------|----------------------------|----------------------------|
| Ակցիզային հարկի<br>հաշվարկման գործակից | 1.0                        | 1.03                       | 1.06                       | 1.09                       |

ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր ամբողջական տոկոսային կետի համար ակցիզային հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով (բացառությամբ կոնյակի սպիրտի), իսկ ներառյալ ինը տոկոս սպիրտայնությամբ ապրանքների համար ակցիզային հարկը յուրաքանչյուր լիտրի համար սահմանվում է 100 դրամ:

Ակցիզային հարկ վճարողների, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների (բացառությամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշալցված կոնյակի, չշալցված կոնյակի սպիրտի և ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների) օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար 6000 դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

Ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի)՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով, չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար՝

- մինչև 3 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5000 դրամից.
- 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5500 դրամից.
- 6-ից մինչև 7 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դրամից.
- 8-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9000 դրամից.
- 11 և ավելի տարի հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 դրամից:

ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող՝ կոնյակ ներմուծող, արտադրող և (կամ) տարայավորող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են կոնյակի տարայի վրա ՀՀ կառավարության սահմանած կարգով մակնշել դրա հնեցման աստիճանը՝ ըստ տարիների: Կոնյակի հնեցման աստիճանի վերաբերյալ տարայի վրա մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկը հաշվարկվում է 20 և ավելի



տարի հնեցման ժամկետ ունեցող խմիչքի համար նախատեսված ոչ պակաս չափով (գործող կարգավորմամբ՝ 22000 ՀՀ դրամ):

Ալկոհոլային խմիչքների ոլորտում մեկ այլ կարևոր խնդիր է համարվում «կոնյակ» և «շամպայն» անվանումների օգտագործումը հայկական ծագման նմանատիպ խմիչքների վաճառքի ժամանակ: «Կոնյակ» և «շամպայն» բրենդները գտնվում են ԵՄ պաշտպանության ներքո, որպես աշխարհագրական նշում, և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված է, որ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո հաշված 24 տարի անցումային ժամկետի ընթացքում «կոնյակի» համար և երեք տարի անցումային ժամկետի ընթացքում «շամպայնի» համար, կդադարեցվեն այդ անվանումների օգտագործումը: Օգտագործման սահուն և արդյունավետ դադարեցումը խթանելու նպատակով ԵՄ-ն Հայաստանին տրամադրում է ֆինանսական և տեխնիկական աջակցություն, որն ուղղված կլինի նաև նոր անուն մշակելուն և ներքին ու արտաքին շուկաներում նոր անունը խթանելուն, գովազդելուն և շուկա հանելուն:

Հայկական հասանելի բաց աղբյուրները չեն տրամադրում տեղեկատվություն այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին: Նույնիսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որը հանդիսանում է բիզնեսի խթանման և նրա շահերի պաշտպանության առաջնային կառույցներից մեկը, չի տրամադրում տեղեկատվություն այս հարցով: Այսպես, 2019 թվականի հոկտեմբերի 17-ին Բյուրսելում կայացավ ՀՀ-ԵՄ Աշխարհագրական նշումների ենթակոմիտեի առաջին նիստը: Նիստի մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարության հրապարակած տեղեկատվությունը սահմանափակվում էր միայն հանդիպման մասին ընդհանուր տեղեկատվության տրամադրմամբ՝ արձանագրելով, որ «Քննարկվել են «շամպայն» և «կոնյակ» ապրանքային նշանների պաշտպանությանն առնչվող գործընթացները և այդ ուղղությամբ նախատեսվող հետագա աշխատանքները...<sup>30</sup>»:

Այնինչ ԵՄ աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ հանդիպման ընթացքում հայկական կողմը հաստատել էր, որ 2020 թվականի հունիսին ՀՀ տարածքում, իսկ մինչև 2021 թվականի հունիս ամիսը արտահանման դեպքում, ամբողջությամբ կդադարեցվի «շամպայն» անվանման օգտագործումը (այդ թվում՝ ոչ լատինատառ) հայկական ծագման ապրանքների համար<sup>31</sup>:

Ինչ վերաբերում է «կոնյակ» անվանմանը, ԵՄ համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանը ներկայումս գտնվում է փոխարինող ավանման ընտրության եզրափակիչ փուլում և արդեն իսկ ընտրվել է հիմնադրամ, որը կհամակարգի հայկական «կոնյակի» վերաբրենդավորումը: Սակայն տեղեկատվությունն

<sup>30</sup> <https://mineconomy.am/news/1867>

<sup>31</sup> [https://trade.ec.europa.eu/doclib/docs/2020/january/tradoc\\_158608.pdf](https://trade.ec.europa.eu/doclib/docs/2020/january/tradoc_158608.pdf)  
[https://trade.ec.europa.eu/doclib/docs/2019/november/tradoc\\_158480.pdf](https://trade.ec.europa.eu/doclib/docs/2019/november/tradoc_158480.pdf)

այսքանով ավարտվում է, և լայն հասարակությանը հասանելի չէ թե՛ այդ հիմնադրամի ընտրության և թե՛ հետագա աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Այս ամենը վկայում է, որ ՀՀ կառավարությունը, թափանցիկության և հաշվետվողականության իր խոստումներին հակառակ, այս ոլորտում կիրառում է ոչ թափանցիկ գործելաոճ, ինչը չի կարող դրական ազդեցություն ունենալ ոլորտի զարգացմանը խոչընդոտող սահմանափակումների վերացմանը, մեծ ներուժ ունեցող ոլորտներում ներդրումների ներգրավմանը և արտաքին շուկաներում հայկական արտադրանքի առաջնղմանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ՀՀ կառավարության և իշխող քաղաքական ուժի կողմից արդյունաբերության ոլորտի զարգացման ուղղությամբ տրված խոստումների և իրականացված աշխատանքների վերլուծությունը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը չունի արդյունաբերության զարգացման տեսլական: Ցանկություն ունենալով տեսնել Հայաստանը որպես արդյունաբերական երկիր և հայտարարելով «տնտեսական հեղափոխության» մասին՝ ՀՀ կառավարությունը մինչ օրս չի ընդունել արդյունաբերության զարգացման ռազմավարություն, որտեղ կներկայացվեր Հայաստանի արդյունաբերության զարգացման նպատակով ՀՀ կառավարության պատկերացումները, նախատեսվող քայլերը և անհրաժեշտ աջակցության ձևաչափը: Ավելին, այսօր ՀՀ կառավարությունն առաջնորդվում է նախկին իշխանության օրոք ընդունված ռազմավարությամբ և աջակցության մեխանիզմներով:
- Թեև ՀՀ կառավարությունն ընդգծում է արդյունաբերական տնտեսության կարևորությունը՝ արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 2017 թվականի համեմատ: Այս երևույթի հետ մեկտեղ, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում 2018-2019թթ.-ին աճել է մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը՝ արդյունաբերության մյուս ճյուղերի համեմատ: 2020 թվականի առաջին եռամսյակում սակայն, նկատվել է հանքարդյունաբերության ծավալների աճ ավելի քան 26%-ով, մշակող արդյունաբերության ընդամենը 3.8% աճի համեմատ, ինչը չի տեղավորվում մշակող արդյունաբերության խրախուսման ՀՀ կառավարության գաղափարախոսության մեջ:
- 2017 թվականին ստանալով արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության թեկնածու երկրի կարգավիճակը՝ ՀՀ նախկին իշխանությունը, ըստ էության, իրականացրեց արդյունահանող ճյուղերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված կարևոր քայլ: Ավելին, ՀՀ նոր կառավարությունը, ԱՃԹՆ 2018 թվականի տարեկան հաշվետվությունում, նույնպես կարևորեց ԱՃԹՆ ստանդարտի ներդրումը և արտահայտեց իր հանձնառությունը «շարունակել ինստիտուցիոնալ և իրավական համակարգային բարեփոխումները»<sup>32</sup>: Այսինքն, հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ապահովման աշխատանքները սկսվել էին դեռևս նախորդ իշխանության օրոք և չեն կարող համարվել այս կառավարության նախաձեռնությունը:

<sup>32</sup> [https://www.eiti.am/files/file/15681245698499/Annual\\_Rrogress\\_Report\\_2018.pdf](https://www.eiti.am/files/file/15681245698499/Annual_Rrogress_Report_2018.pdf)

- 2018 թվականի իշխանափոխությունից հետո ՀՀ կառավարությունը հայտարարեց հանքարդյունաբերության նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Այն իր արտահայտությունը գտավ նաև ՀՀ կառավարության ծրագրում: Սակայն, այդ հայտարարություններից երկու տարի անց, այսօր դեռ չկա մշակված և հաստատված ոլորտի ռազմավարություն:
- Որպես վերամշակող արդյունաբերության զարգացման հիմնական խոչընդոտ ՀՀ կառավարությունը համարում է ոչ ժամանակակից և էներգատար տեխնոլոգիաների առկայությունը, իսկ էներգատարության նորմատիվների մշակումը դիտարկում է որպես լուծում: Միակարծիք լինելով էներգաարդյունավետ և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությանը՝ մեր կարծիքով դա մշակող արդյունաբերության զարգացմանը խոչընդոտող երևույթներից միայն մեկն է: Իսկ էներգատարության նորմատիվներ մշակելով՝ դժվար կլինի աջակցել ոլորտի կազմակերպություններին այս խնդրի լուծման գործում՝ քանի որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է զգալի ներդրումներ, որոնք, տեղական կազմակերպությունները, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունները, ի վիճակի չեն ներգրավել:
- Թափանցիկությունը և հաշվետվողականությունը կան և հանդիսանում են նոր կառավարության գործունեության էական խնդիրներից մեկը: Ինչպես բազմիցս նշել ենք մեր տարբեր ուսումնասիրություններում, բիզնեսն ակտիվորեն չի ներգրավվում քաղաքականության և իրավական փաստաթղթերի մշակման աշխատանքներում: Ավելին, բավականին ցածր մակարդակով է իրականացվում արդեն իսկ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման միջոցառումները: Դրանցից են ԵԱՏՄ տարածքում ծխախոտի ակցիզային հարկի նոր դրույքաչափերի, ապրանքների ոչ սակագնային կարգավորումների փոփոխությունների կամ «կոնյակ» և «շամպայն» անվանումների հետագա օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: